72 ժամ

ԴԱՍԵՆՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

Տեսական ուսուցում՝

22 ժամ

Գործնական պարապմունքներ՝

50 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում

ՄՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել նախագծա-կոնստրուկտորական, տեխնոլոգիական և տեխնիկական այլ փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ կարողություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Մշակել պարզ պատկերների և տիպային մեքենամասերի էսքիզներ ու աշխատանքային գծագրեր,
2. Մշակել աշխատանքային գծագրեր և էսքիզներ,
3. Մշակել հավաքական գծագրեր,
4. Մշակել գծագրեր համակարգչային գծանկարչության տարրերով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1: Մշակել պարզ պատկերների և տիպային մեքենամասերի էսքիզներ ու աշխատանքային գծագրեր

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ կորերի լծորդում, փոխուղղահայաց ուղիղների կառուցում, եռանկյունների կառուցում կորդինատներով և այլն,
- բ. ճիշտ է կատարում պարզ պատկերների պրոյեկտումը հարթությունների վրա,
- գ. ճիշտ է կատարում տիպային մեքենամասերի պրոյեկտումը հարթությունների վրա և պատկերում դրանց երեք պրոյեկցիաները,
- դ. ճիշտ է տալիս կտրվածքներ և պատկերում է առաջադրված տիպային մեքենամասերի աշխատանքային գծագրերը և էսքիզները,
- ե. ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա տիպային մեքենամասերի չափերը,
- զ. ճիշտ է կառուցում տիպային մեքենամասերի տարածական (աքսոնոմետրիկ) պատկերները,
- է. ճիշտ է կատարում տիպային մեքենամասի բնօրինակից համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին տրվում են անհատական առաջադրանքներ հարթության վրա երկրաչափական կառուցումներ կատարելու, տիպային մեքենամասի երեք պրոյեկցիաները հարթության վրա պրոյեկտելու, տարածական (աքսոնոմետրական) պատկերը կառուցելու, ինչպես նաև էսքիզը ու աշխատանքային գծագիրը պատկերելու համար: Սովորողը պետք է տիպային մեքենամասի բնօրինակից կատարի համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը: Գնահատումը կատարվում է բնօրինակի և աշխատանքային գծագրի համեմատության հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Գծագրերի ձևակերպման կանոնները, տեխնիկական մեքենամասերի եզրագծերի երկրաչափական կառուցումը, գծագրական կանոնները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, դիդակտիկ նյութեր, գծագրական գործիքներ, գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ, տիպային մեքենամասերի մոդելներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մշակել աշխատանքային գծագրեր և էսքիզներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա.ճիշտ է ներկայացնում գծագրերի ձևավորման կանոնները,
- բ.ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված չափերի թույլվածքները և մաքրության դասերի նշանակումները,
- գ.ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերում և էսքիզներում, պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները,
- դ.ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էսքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները,
- ե.ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի կամ էսքիզի վրա երիթը, բազմաերիթը, ատամնաանիվը, տարբեր նշանակության առվակները, երեսակները և նմանատիպ այլ տարրերը,
- զ. ճիշտ է պատկերում շինարարական գծագրության տարրերը::

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին տրվում են տարբեր տիպային մեքենամասերի էսքիզներ ու աշխատանքային գծագրեր դրանց վրա մեքենամասերի չափերը, չափերի թույլտվածքները, մաքրության դասերը, մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները պատկերելու համար: Սովորողը պետք է տիպային մեքենամասի (ատամնանիվ, փոկանիվ, աստղանիվ, լիսեռ, կցաշուրթ և այլն) էսքիզի և աշխատանքային գծագրի վրա ներկայացնի տեխնիկական պահանջները և մեկնաբանի այդ մեքենամասի առանձին տարրերի (երիթ, բազմաերիթ, տարբեր նշանակության առվակներ, երեսակներ և այլն) նշանակումները: Գնահատումը կատարվում է աշխատանքային գծագրի օրինակի հիման վրա:Արդյունքը կհամարվի ձեռքբերված` կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Կոնստրուկտորական փաստաթղթերի մշակման և ձևակերպման կանոնները, մեքենաշինական գծագրություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, դիդակտիկ նյութեր, գծագրական գործիքներ, գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ, տիպային մեքենամասերի մոդելներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Մշակել հավաքական գծագրեր

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է պատկերում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին մեքենամասերի դիրքավորումները,
- բ. ճիշտ է պատկերում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնաանվային կառույց, առանցքակալային նստեցվածք, եռակցման միացություն և նմանատիպ այլ նշանակումներ,
- գ. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները,
- դ. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը,
- ե. ճիշտ է ընտրում համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը՝ օգտվելով գծագրերի փաթեթից և հավաքական գծագրից,
- զ. ճիշտ է ընտրում տեղամասի գծագիրը՝ օգտվելով հատակագծից,
- է. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և հատակագծի տեխնիկական պահանջները,
- ը. ճիշտ է մշակում և ձևավորում կոնստրուկտորական փաստաթղթերը,
- թ. ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործունեությանն առնչվող համակարգչային ծրագրերի կիրառական փաթեթները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին տրվում են տարբեր մեքենաների հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրեր դրանց վրա բացատրելու առանձին մեքենամասերի (ատամնանիվ, փոկանիվ, աստղանիվ, լիսեռ, կցաշուրթ և այլն) ինչպես նաև այդ մեքենամասի առանձին տարրերի (երիթ, բազմաերիթ, տարբեր նշանակության առվակներ, երեսակներ և այլն) դիրքավորման նշանակումները: Սովորողը պետք է մեկնաբանի հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքները, հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, ինչպես նաև հավաքական գծագրի հիման վրա ընտրի համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Հատույթներ, կտրվածքներ, տեսքեր, հավաքական գծագրեր, հավաքական գծագրերի մասնահանումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, դիդակտիկ նյութեր, հավաքական գծագրերի ատլասներ, գծագրական գործիքներ, գծագրման համար անհրաժեշտ պիտույքներ, մեքենայի հանգույցների մոդելներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մշակել գծագրեր համակարգչային գծանկարչության տարրերով

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում AutoCAD ծրագրային փաթեթի հնարավորությունները,
- բ. ճիշտ է բացում AutoCAD-ի պատուհանը, համակարգչային մենյուները, գործիքային վահանակները, հրամանների և կարգավիճակի տողերը,
- գ. ճիշտ է կարգավորում աշխատանքային միջավայրը,

- դ. ճիշտ է ընտրում կողողինատների համակարգերը, չափման միավորները, գծագրի սահմանների դոյմական և մետրական համակարգերը,
- ե. ճիշտ է ընտրում մասշտաբները,
- զ. ճիշտ է տալիս երկրաչափական օբյեկտների կառուցման հրամանները,
- է. ճիշտ է ընտրում կառուցման ռեժիմները (երկչափ համակարգում),
- ը. ճիշտ է կառավարում էկրանային պատկերը և ստեղծում տեքստ,
- թ. ճիշտ է կիրառում երկրաչափական չափերը և թույլտվածքները,
- ժ. ճիշտ է ընտրում չափերի ոճը և չափային համակարգային փոփոխականները,
- ժա. ճիշտ է պատկերում տեսքային էկրանները մոդելի տարածության մեջ և թղթի տարածության մեջ,
- ժբ. ճիշտ է կառավարում տեղեկատվության ելքը տպագրման և գծագրման միջոցով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին տրվում է անհատական առաջադրանք՝ AutoCAD ծրագրային փաթեթի միջոցով կառուցել երկրաչափական օբյեկտներ, ճիշտ կիրառելով երկրաչափական չափերը և թույլտվածքները, ներկայացնել տեղեկատվության ելքը տպագրման և գծագրության միջոցով: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝

Համակարգիչներ , AutoCAD ծրագրային փաթեթներ, գծագրի սահմանների դոյմական և մետրական համակարգերի վերաբերյալ պլակատներ, հատույթների, կտրվածքների տեսքեր, հավաքական գծագրեր, հավաքական գծագրերի մասնահանումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ անհատական համակարգիչներ, AutoCAD ծրագրային փաթեթներ, ուսումնական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր, հավաքական գծագրերի ատլասներ, մեքենայի հանգույցների մոդելներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական պարապմունքներ՝	16 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«ԻՆՏԵՆԵՐԱԿԱՆ ԳԵՈՂԵԶԻԱ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-002

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

72 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝

Տեսական ուսուցում՝

24 ժամ

Գործնական պարապմունքներ՝

48 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-001<<Ճարտարագիտական գծանկարչություն>>, ԱՀ ԱԱՕ 5 -11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլները:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել հատակագծերում և քարտեզներում տեղանքի իրավիճակի և ռելիեֆի պատկերման, ինչպես նաև չափումներ կատարելու կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Ընտրել մասշտաբ և որոշել կետերի կոորդինատները
2. Պատկերել հատակագծում և քարտեզում տեղանքի իրավիճակը և ռելիեֆը
3. Չափել և որոշել մակերեսները հատակագծերում և քարտեզներում
4. Կողմնորոշել գծերը տեղանքի վրա
5. Կատարել անկյունային չափումներ
6. Կատարել գծային չափումներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ընտրել մասշտաբ և որոշել կետերի կոորդինատները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի դերն ու խնդիրները,
- բ. ճիշտ է օգտագործում մասշտաբները,
- գ. ճիշտ է պատկերում մասշտաբները,
- դ. ճիշտ է որոշում մասշտաբների ճշտությունը,
- ե. ճիշտ է որոշում և տեղադրում կետերի ուղղանկյուն կոորդինատները,
- զ. ճիշտ է որոշում և տեղադրում գծերի երկարությունը,
- է. ճիշտ է որոշում կետերի աշխարհագրական կոորդինատները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումը կատարվում է գեոդեզիայի ուսումնասիրման առարկայի ու ժամանակակից խնդիրների վերաբերյալ հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է տեղադրել կետերի ուղղանկյուն կոորդինատները, որոշել կետերի աշխարհագրական կոորդինատները: Հարցերին բանավոր պատասխանելիս թույլատրվում են որոշ ոչ էական սխալներ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Կետերի աշխարհագրական կոորդինատներ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ կետերի ուղղանկյուն կոորդինատները և աշխարհագրական կոորդինատները բնութագրող պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	2 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Պատկերել հատակագծում և քարտեզում տեղանքի իրավիճակը և ռելիեֆը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում տեղանքի տարրերը,
- բ. ճիշտ է պատկերում իրադրության պայմանական նշանները,
- գ. ճիշտ է պատկերում ռելիեֆի հիմնական ձևերը հատակագծում և քարտեզում,

դ. ճիշտ է պատկերում ռելիեֆի հիմնական ձևերը հորիզոնականներով,
ե. ճիշտ է որոշում կետերի բարձրանիշը
զ. ճիշտ է կառուցում հորիզոնականները կետերի բարձրանիշերով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատկերում ռելիեֆի հիմնական ձևերը հատակագծում և քարտեզում, որոշում կետերի բարձրանիշը և կառուցում հորիզոնականները բարձրանիշերով:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Տարբեր ռելիեֆների հատակագծեր, քարտեզներ, պայմանական նշանների տեղեկատուներ և դիտակտիկ նյութեր:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր ռելիեֆների հիմնական տեսակների և պայմանական նշանների վերաբերյալ պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Չափել և որոշել մակերեսները հատակագծերում և քարտեզներում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է որոշում մակերեսները տարբեր եղանակներով,
բ. ճիշտ է օգտագործում պլանիմետրը,
գ. ճիշտ է հաշվում մակերեսը պլանիմետրով քարտեզի և հատակագծի վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է տանում լեռնահովտում գտնվող ծրագծի կետի համար ջրահավաք մակերեսի սահմանը և ճիշտ է որոշում ջրահավաք մակերեսները տարբեր եղանակներով: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ, հատակագծերի և քարտեզների վրա առանձնացված փակ ուրվագծերի մակերեսներով պլակատներ, պլանիմետրեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կողմնորոշել գծերը տեղանքի վրա

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում միջօրեականները,

- բ. ճիշտ է որոշում ազիմուտի, անկյունամասի/ռումբի/, ուղղորդող անկյունները,
- գ. ճիշտ է որոշում ուղիղ և հակադարձ ազիմուտները,
- դ. ճիշտ է որոշում մասշտաբների ճշտությունը,
- ե. ճիշտ է անցնում ազիմուտից անկյունամաս և հակառակը,
- զ. ճիշտ է որոշում միջօրեականների մերձեցման անկյունը,
- է. ճիշտ է կատարում բուսուլների ստուգումներ,
- ը. ճիշտ է որոշում բուսուլի օգնությամբ գծի ազիմուտը և անկյունամասը,
- թ. ճիշտ է կողմնորոշվում տեղագրական քարտեզներով և հատակագծերով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կատարում բուսուլների ստուգումը, ճիշտ կողմնորոշվում տեղագրական քարտեզներով և հատակագծերով: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ, բուսուլներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել անկյունային չափումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում թեոդոլիտների նշանակությունը, տեսակները և դասակարգումը,
- բ. ճիշտ է որոշում վեռների ճշտությունը,
- գ. ճիշտ է բացատրում թեոդոլիտի հիմնական առանցքները և դրանց փոխադարձ դասավորությունը,
- դ. ճիշտ է բերում թեոդոլիտը աշխատանքային դիրքի,
- ե. ճիշտ է կատարում թեոդոլիտի հիմնական ստուգումները և վերացնում թերությունները,
- զ. ճիշտ է չափում հորիզոնական անկյունները,
- է. ճիշտ է հաշվում հորիզոնական անկյունը և լրացնում անկյունաչափական մատյանը,
- ը. ճիշտ է որոշում թեոդոլիտի ուղղաձիգ շրջանի գրոյի տեղը,
- թ. ճիշտ է որոշում լիմբի բաժանման գիծը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կատարում թեոդոլիտի հիմնական ստուգումները, անհրաժեշտության դեպքում վերացնում թերությունները, ճիշտ է չափում հորիզոնական անկյունները և լրացնում մատյանը, ճիշտ է որոշում լիմբի բաժանման գիծը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ անհատական թեոդոլիտներ, տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, դիտակտիկ նյութեր, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կատարել գծային չափումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում կետերի ամրացման կարգը,
- բ. ճիշտ է կատարում գծի նշածողումը տարբեր պայմաններում,
- գ. ճիշտ է օգտագործում չափող սարքերը,
- դ. ճիշտ է որոշում հեռաչափի հաստատունը,
- ե. ճիշտ է հաշվում հեռաչափով գծի երկարությունը,
- զ. ճիշտ է որոշում անմատչելի կետի հեռավորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է որոշում հեռաչափի հաստատունը, հաշվում հեռաչափով գծի երկարությունը և անմատչելի կետի հեռավորությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ անհատական թեոդոլիտներ, տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, դիտակտիկ նյութեր, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-003

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

72 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝

Տեսական ուսուցում`	18 ժամ
Գործնական պարապմունքներ`	54 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-002 <<Ինժեներական գեոդեզիա>>, ԱՀ ԱԱՕ 5-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլները:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել գեոդեզիական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրաքանչյուր հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Կատարել մակարդակաչափման աշխատանքներ
2. Կազմել հրապարակի և ծրագծի հատակագիծը
3. Կատարել թեոդոլիտային , պտուտաչափական և լուսատեղագրական հանույթները
4. Կատարել գեոդեզիական աշխատանքներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել մակարդակաչափման աշխատանքներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է որոշում բացարձակ և հարաբերական բարձրությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում մակարդակաչափի և քանոնի նշանակությունը, տեսակները և դասակարգումը,
- գ. ճիշտ է կատարում հաշվեցույցի ընթերցում քանոնով,
- դ. ճիշտ է բերում մակարդակաչափը աշխատանքային դիրքի,
- ե. ճիշտ է կատարում մակարդակաչափի հիմնական ստուգումները,
- զ. ճիշտ է կատարում երկրաչափական մակարդակաչափումը,
- է. ճիշտ է ներկայացնում կապող, իքսային, հետևի, առջևի կետերը,
- ը. ճիշտ է կատարում ծրագծի երկայնական և լայնական մակարդակաչափումները,
- թ. ճիշտ է կատարում մակարդակաչափման դաշտային ստուգումներ,
- ժ. ճիշտ է կատարում երկայնական և լայնական մակարդակաչափման մատյանների լրացում և մշակում,
- ժա. ճիշտ է մշակում երկայնական և լայնական կտրվածքների գծագրերը,
- ժբ. ճիշտ է կատարում մակերեսների մակարդակաչափումը և քառակուսային ցանցի գագաթների բարձրանիշների հաշվումը,
- ժգ. ճիշտ է կազմում հորիզոնական հրապարակի հատակագիծը հորիզոնականներով,
- ժդ. ճիշտ է կատարում եռանկյունաչափական մակարդակաչափումը,
- ժե. ճիշտ է հաշվում վերագինումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կատարում մակարդակաչափի ստուգումները, երկայնական և լայնական մակարդակաչափումներ, մակերեսների մակարդակաչափումներ, կազմում է հորիզոնական հրապարակի հատակագիծ հորիզոնականներով և կատարում եռանկյունաչափական մակարդակաչափում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ անհատական մակարդակաչափեր, քանոններ, երկայնական և լայնական մակարդակաչափման մատյաններ, տարբեր տեսակների հատակագծեր և քարտեզներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, դիտակտիկ նյութեր :

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմել հրապարակի և ծրագծի հատակագիծը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհի առանցքային գծի հիմնական կետերը և դրանց վերականգնումը,
- բ. ճիշտ է հաշվում դարձի անկյունը, միջանկյունային հեռավորությունը, թեքման անկյունը,
- գ. ճիշտ է պատկերում շրջանային և անցումային կորերի կետերը,
- դ. ճիշտ է հաշվում շրջանային և անցումային կորերի տարրերի արժեքները,
- ե. ճիշտ է հաշվում շրջանային և անցումային կորերի գլխավոր կետերի ցցանշման արժեքները,
- զ. ճիշտ է ստուգում կորի վերջի ցցանշման արժեքը,
- է. ճիշտ է կատարում ցցանշում և լրացնում ցցանման գրքույկը,
- ը. ճիշտ է տեղափոխում տանգենտի գագաթնակետը կորի վրա,
- թ. ճիշտ է կազմում դարձի անկյունների, ուղիղների և կորերի ամփոփագրերը և ճիշտ կատարում ծրագծի ստուգումները,
- ժ. ճիշտ է կատարում քառակուսային ցանցի տեղակայում, գծային և անկյունային չափումներ օդանավակայանների հրապարակի հանույթի համար,
- ժա. ճիշտ է կազմում հրապարակի և ծրագծի հատակագիծը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կատարում՝ կատարում քառակուսային ցանցի տեղակայում, գծային և անկյունային չափումներ օդանավակայանների հրապարակի հանույթի համար, ճիշտ է կազմում հրապարակի և ծրագծի հատակագիծը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ցցանշման անհատական միջոցներ, ցցանման անհատական գրքույկներ, տարբեր հրապարակների և ծրագծերի հատակագծերի օրինակներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, դիտակտիկ նյութեր :

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԵՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել թեոդոլիտային , պտուտաչափական և լուսատեղագրական հանույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է կատարում թեոդոլիտային աշխատանքները և լրացնում մատյանները,
- բ. ճիշտ է կատարում թեոդոլիտային հանույթի գրասենյակային աշխատանքները,
- գ. ճիշտ է կատարում թեոդոլիտային հանույթը,
- դ. ճիշտ է կազմում հատակագիծը և ձևավորում,
- ե. ճիշտ է կազմում պտուտաչափական հանույթի հատակագծային հիմքը,
- զ. ճիշտ է կատարում պտուտաչափական հանույթը,
- է. ճիշտ է կատարում պտուտաչափական հանույթի մատյանի լրացում,
- ը. ճիշտ է կատարում պտուտաչափական հանույթի գծանկարչական մշակում, հատակագծի կազմում և ձևավորում,
- թ. ճիշտ է ներկայացնում լուսատեղագրական հանույթները,
- ժ. ճիշտ է ներկայացնում լուսանկարաչափական կոորդինատները,
- ժա. ճիշտ է բացատրում լուսասխեմաները և լուսանկարապլանները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում թեոդոլիտի աշխատանքային մասերի և թեոդոլիտից օգտվելու կարգը, թեոդոլիտայի հանույթի հաջորդական քայլերը, ճիշտ է կատարում պտուտաշափական հանույթի գծանկարչական մշակում, հատակագծի կազմում և ձևավորում, ճիշտ է ներկայացնում լուսանկարաչափական կողորդինատները և բացատրում լուսասխեմաները և լուսանկարապլանները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ անհատական թեոդոլիտներ, մատյաններ, տարբեր հատակագծերի,լուսատեղագրական հանույթների լուսասխեմաների և լուսանկարապլանների օրինակներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, դիտակտիկ նյութեր :

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կատարել գեոդեզիական աշխատանքներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջները,
- բ. ճիշտ է տեղադրում նախագծային գծի երկարությունը,
- գ. ճիշտ է կառուցում տրված մեծության անկյունը,
- դ. ճիշտ է տեղափոխում խրամատի հատակում և բարձունքում նախագծային նիշը,
- ե. ճիշտ է վերականգնում առանցքային գիծը,
- զ. ճիշտ է կատարում շրջանային կորի մանրամասն նշահարում,
- է. ճիշտ է կատարում անցումային կորի մանրամասն նշահարում,
- ը. ճիշտ է կատարում հողային պաստառի նշահարում լիցքի և փորվածքի դեպքում,
- թ. ճիշտ է կատարում ջրթող խողովակի, փոքր կամրջի, ճանապարհամերձ կառույցի նշահարում,
- ժ. ճիշտ է որոշում շինարարական թույլտվածքները և ճշտությունը նշահարման աշխատանքներ կատարելիս,
- ժա. ճիշտ է իրականացնում շինարարական աշխատանքների գեոդեզիական հսկողությունը,
- ժբ. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտմանը վերաբերող վարչական տույժերը,
- ժգ. ճիշտ է հրահանգավորում, կազմակերպում և իրականացնում գեոդեզիական աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի անվտանգության միջոցառումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կատարում նշահարում և որոշում շինարարական թույլտվածքները, ճիշտ է ներկայացնում գեոդեզիական աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի անվտանգության միջոցառումները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ գեոդեզիայի բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները, անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, դիտակտիկ նյութեր :

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	14 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՃՕՇ 5-11-004

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝	Տեսական պարապմունք`	24 ժամ
	Գործնական աշխատանք`	48 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ ԱԱՕ 5-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլը:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել էլեկտրական շղթաների հավաքման, պարամետրերի հաշվարկման, էլեկտրական մեքենաների, սարքավորումների, էլեկտրական հաղորդակների և էլեկտրոնային սարքավորումների կիրառման և շահագործման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Հավաքել էլեկտրական շղթաներ
2. Հաշվարկել հոսանքի շղթաների էլեկտրական պարամետրերը
3. Աշխատեցնել տրանսֆորմատորները
4. Ընտրել և աշխատեցնել էլեկտրական մեքենաները
5. Ներկայացնել ճանապարհա շինարարական մեքենաների և սարքավորումների էլեկտրահաղորդակները
6. Ընտրել էլեկտրոնային սարքերը և սարքավորումները

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Հավաքել էլեկտրական շղթաներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրական շղթա հասկացությունը, հիմնական տարրերը և սկզբունքային սխեմաները,
- բ. ճիշտ է հավաքում հաստատուն հոսանքի պարզագույն շղթան և ներկայացնում հաշվարկման մեթոդները,

- գ. ճիշտ է հավաքում փոփոխական հոսանքի շղթան և ներկայացնում հաշվարկման մեթոդները,
- դ. ճիշտ է ներկայացնում աստղածև և եռանկյունածև միացված համաչափ և ոչ համաչափ եռաֆազ շղթաները և դրանց հաշվարկման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է հավաքում, հաստատուն և փոփոխական հոսանքի պարզագույն շղթաները, ճիշտ է ներկայացնում աստղածև և եռանկյունածև միացված համաչափ և ոչ համաչափ եռաֆազ շղթաները և դրանց հաշվարկման մեթոդները: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: : Անհրաժեշտ է ունենալ հաստատուն և փոփոխական հոսանքի շղթաների սխեմաներ, էլեկտրական տարբեր սարքավորումների և մասերի տեսականի, չափիչ ստուգիչ սարքեր, օժանդակ գործիքներ և հարմարանքներ, մեթոդական ցուցումներ, տեղեկատուներ, մասնագիտական գրականություն, անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգներ, դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական պարապմունքներ`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հաշվարկել հոսանքի շղթաների էլեկտրական պարամետրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է որոշում հաստատուն հոսանքի պարզագույն շղթայի էլեկտրական պարամետրերը,
- բ. ճիշտ է որոշում փոփոխական հոսանքի շղթաների հիմնական էլեկտրական պարամետրերը,
- գ. ճիշտ է որոշում եռաֆազ հոսանքի էլեկտրական շղթաների հիմնական էլեկտրական պարամետրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է որոշել առաջադրված հաստատուն և փոփոխական շղթաների էլեկտրական պարամետրերը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ հաստատուն և փոփոխական հոսանքի շղթաների սխեմաներ, էլեկտրական տարբեր սարքավորումների և մասերի տեսականի, չափիչ ստուգիչ սարքեր, օժանդակ գործիքներ և հարմարանքներ, մեթոդական ցուցումներ, տեղեկատուներ, մասնագիտական գրականություն, անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգներ, աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ, դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Աշխատեցնել տրանսֆորմատորները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է ներկայացնում տրանսֆորմատորների դերն ու նշանակությունը և հիմնական տեսակները,
- բ. ճիշտ է ներկայացնում միաֆազ տրանսֆորմատորների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կիրառությունը,
- գ. ճիշտ է աշխատեցնում տրանսֆորմատորները պարապ ընթացքի, կարճ միացման և աշխատանքային ռեժիմներում,

- դ. ճիշտ է ներկայացնում եռաֆազ տրանսֆորմատորների, ավտոտրանսֆորմատորների և եռակցման տրանսֆորմատորների կառուցվածքները, աշխատանքի սկզբունքը և կիրառությունները,
- ե. ճիշտ է աշխատեցնում եռաֆազ տրանսֆորմատորները,
- զ. ճիշտ է աշխատեցնում ավտոտրանսֆորմատորները,
- է. ճիշտ է աշխատեցնում եռակցման տրանսֆորմատորը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում առաջադրված տրանսֆորմատորի ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կիրառությունը, ճիշտ է աշխատեցնում տրանսֆորմատորը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակների տրանսֆորմատորներ և մոդելներ, էլեկտրական սխեմաներ, չափիչ ստուգիչ սարքավորումներ, օժանդակ հարմարանքներ, դիդակտիկ նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգներ և աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	5 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ընտրել և աշխատեցնել էլեկտրական մեքենաները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է ընտրում և աշխատեցնում եռաֆազ անհամաժամ շարժիչը տարբեր աշխատանքային ռեժիմներում,
- բ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում եռաֆազ համաժամ շարժիչը տարբեր աշխատանքային ռեժիմներում,
- գ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում հաստատուն հոսանքի մեքենան որպես գեներատոր և որպես շարժիչ,
- դ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում գեներատորները աշխատանքային տարբեր ռեժիմներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում առաջադրված եռաֆազ շարժիչի, հաստատուն հոսանքի մեքենայի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, ճիշտ է ընտրում և աշխատեցնում եռաֆազ շարժիչը և հաստատուն հոսանքի մեքենան: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ եռաֆազ անհամաժամ և համաժամ շարժիչների, հաստատուն հոսանքի մեքենաների տարբեր տեսականի, մոդելներ, էլեկտրական սխեմաներ, չափիչ ստուգիչ սարքավորումներ, օժանդակ հարմարանքներ, դիդակտիկ նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգներ և աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	5 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների էլեկտրահաղորդակները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրահաղորդակի դերը ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների աշխատանքի և շահագործման ընթացքում,
- բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրահաղորդակի մեքենաները, փոխանցումները, կառավարման, պաշտպանիչ և էլեկտրաչափիչ սարքերը և դրանց շահագործման կանոնները,
- գ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում էլեկտրական շարժիչները,
- դ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում էլեկտրական ապարատները և կառավարման սխեմաները,
- ե. ճիշտ է ընտրում էլեկտրահաղորդման լարերը, մալուխները հուսալի և անվտանգ էլեկտրամատակարարման նպատակով,
- զ. ճիշտ է շահագործում և սպասարկում էլեկտրապահարանները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում առաջադրված էլեկտրահաղորդակի նշանակությունը, հաղորդակի հիմնական մասերը, փոխանցումները, դրանց աշխատանքն ու շահագործման կանոնները, ճիշտ է ընտրում և աշխատեցնում էլեկտրական շարժիչները, էլեկտրական ապարատները և կառավարման սխեմաները: Սովորողը պետք է առաջադրված մալուխների տեսականուց ճիշտ ընտրություն կատարի առաջադրված էլեկտրական համակարգի սնուցման համար, ներկայացնի էլեկտրական պահարանների սպասարկման կարգը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ էլեկտրական հաղորդակների տարբեր տեսականի, մոդելներ, պլակատներ: Էլեկտրահաղորդակի տարբեր մասերի մոդելներ և նմուշներ, կիրառման սխեմաներ: Ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր, անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգներ և աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	5 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ընտրել էլեկտրոնային սարքերը և սարքավորումները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ՈՒՏԱՆՈՂԸ`

- ա. ճիշտ է բացատրում էլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները,
- բ. ճիշտ է ընտրում, գործարկում և աշխատեցնում ճանապարհաշինարարական մեքենաներում և սարքավորումներում, մասնագիտացված շարժակազմերում կիրառվող էլեկտրոնային սարքավորումները,
- գ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում ճանապարհաշինարարական մեքենաներում և սարքավորումներում կիրառվող էլեկտրոնային համուղիչները և կայունարարները,
- դ. ճիշտ է ընտրում, գործարկում և աշխատեցնում էլեկտրոնային գեներատորները,
- ե. ճիշտ է օգտագործում էլեկտրոնային չափիչ սարքերը և իրականացնում չափումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում առաջադրված էլեկտրոնային սարքավորումների նշանակությունը, հիմնական մասերը, դրանց աշխատանքն ու շահագործման կանոնները, ճիշտ է ընտրում և աշխատեցնում էլեկտրոնային համուղղիչները, կայուն արարները, գեներատորները, իրականացնում չափումներ: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային սարքավորումների տարբեր տեսականի, մոդելներ, պլակատներ, տարբեր մասերի մոդելներ և նմուշներ, չափիչ սարքավորումներ, կիրառական սխեմաներ: Ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր, անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգներ և աշխատանքի անվտանգության անհատական միջոցներ:

ՌԻՍԻՑՍԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	5 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ՄՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

ՄՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ` ԱՃՕՇ 5-11-005

ՄՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 54 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ`	Տեսական պարապմունք`	18 ժամ
	Գործնական աշխատանք`	36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

ՄՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ`

Ձևավորել ինժեներա-երկրաբանական գործընթացների և երևույթների վերլուծման և գնահատման, պաշտպանական ինժեներական միջոցառումների հանձնարարականների մշակման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա`

1. Իմանալ մասնագիտությանն առնչվող հիմնական բնագավառները
2. Ճանաչել երկրակեղևի հանքանյութերը
3. Ճանաչել լեռնային ապարները
4. Ներկայացնել երկրի արտաձին ուժերի երկրաբանական գործունեությունը
5. Իմանալ ստորգետնյա ջրերի ազդեցությունը
6. Ներկայացնել երկրի կեղևի աստիճանական փոփոխությունը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ մասնագիտությանն առնչվող հիմնական բնագավառները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

ա. ճիշտ է բացատրում երկրաբանության նշանակությունը ճանապարհային շինարարությունում,

բ. ճիշտ է ներկայացնում երկիրը և նրա ձևը,

գ. ճիշտ է ներկայացնում երկրի կառուցվածքը և նրա թաղանթները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում երկրաբանության նշանակությունը ճանապարհային շինարարությունում, երկիրը և նրա ձևը, երկրի կառուցվածքը և նրա թաղանթները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ երկրի կառուցվածքի և նրա թաղանթների մոդելներ, պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ճանաչել երկրակեղևի հանքանյութերը

Ուսանողը`

ա. ճիշտ է ճանաչում երկրակեղևի հանքանյութերը,

բ. ճիշտ է տարբերում և ընտրում ապարակազմող հանքանյութերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ճանաչում և ընտրում երկրակեղևի հանքանյութերը, ապարակազմող հանքանյութերը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ երկրակեղևի հանքանյութերի և ապարակազմող հանքանյութերի տեսականի, պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ճանաչել լեռնային ապարները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է դասակարգում լեռնային ապարները,

բ. ճիշտ է տարբերում և ընտրում լեռնային ապարները,

գ. ճիշտ է ներկայացնում լեռնային ապարների հողմնահարումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ճանաչում և ընտրում լեռնային ապարները, ներկայացնում լեռնային ապարների հողմնահարումը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ լեռնային ապարների տեսականի, պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել երկրի արտաձին ուժերի երկրաբանական գործունեությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է գնահատում հոսող ջրերի երկրաբանական գործունեությունը,
- բ. ճիշտ է գնահատում ծովի երկրաբանական գործունեությունը,
- գ. ճիշտ է գնահատում սառցադաշտերի երկրաբանական գործունեությունը,
- դ. ճիշտ է բնութագրում լճերի, ճահիճների նստվածքները,
- ե. ճիշտ է գնահատում քամու երկրաբանական գործունեությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է գնահատում հոսող ջրերի, ծովերի և սառցադաշտերի երկրաբանական գործունեությունը, տարբերում է լճերի, ճահիճների նստվածքները, գնահատում քամու երկրաբանական գործունեությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ լճերի, ճահիճների նստվածքների տեսականի, հոսող ջրերի, ծովի, պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իմանալ ստորգետնյա ջրերի ազդեցությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է դասակարգում ստորգետնյա ջրերը,
- բ. ճիշտ է ներկայացնում գրունտային ջրերը,
- գ. ճիշտ է ներկայացնում ճնշումային ջրերը և աղբյուրները,
- դ. ճիշտ է ընտրում գրունտային ջրերի մակարդակի արհեստական իջեցման եղանակը,
- ե. ճիշտ է որոշում ստորգետնյա ջրերի քիմիական կազմը,
- զ. ճիշտ է գնահատում սողանքի ապարաթափվածքի կարստի ազդեցությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում և դասակարգում ստորգետնյա ջրերը, գրունտային ջրերը, ճնշումային ջրերը և աղբյուրները, ճիշտ է որոշում ստորգետնյա ջրերի քիմիական կազմը և գնահատում ապարաթափվածքի կորստի ազդեցությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ստորգետնյա ջրերի, գրունտային ջրերի տեսականի, ստորգետնյա ջրերի քիմիական կազմի որոշման անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներ և միջոցներ, պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ներկայացնել երկրի կեղևի աստիճանական փոփոխությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում <<երկրաբանական տարիք>> հասկացությունը,
- բ. ճիշտ է բացատրում կյանքի զարգացումը երկրի վրա և հիմնական երկրաբանական իրադարձությունները,
- գ. ճիշտ է գնահատում և կիրառում չորրորդական նստվածքները,
- դ. ճիշտ է օգտագործում երկրաբանական քարտեզները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում կյանքի զարգացումը երկրի վրա և հիմնական երկրաբանական իրադարձությունները, ճիշտ է գնահատում և կիրառում չորրորդական նստվածքները, ճիշտ է օգտագործում երկրաբանական քարտեզները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ չորրորդական նստվածքների նմուշներ, երկրաբանական քարտեզները, պլակատներ, նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՃԱՆԱԴԱՐՀԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ. ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍԱԿԱՆ ՔԱՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՂ ՆՅՈՒԹԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՃՕՇ 5-11-006

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝ Տեսական պարապմունք՝ 36 ժամ
Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շինարարության, շահագործման, նորոգման և պահպանման աշխատանքներում օգտագործվող բնական և արհեստական քարային նյութերի, օրգանական կապակցող նյութերի և ասֆալտաբետոնե խառնուրդների ընտրության և կիրառման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

- 1. Բնութագրել ճանապարհաշինարարական նյութերի հիմնական հատկությունները
- 2. Ընտրել բնական քարային նյութեր

3. Ընտրել խեցեգործական /կերամիկական/ նյութեր
4. Ընտրել անօրգանական հումքի հալույթից ստացված նյութերը
5. Ընտրել օրգանական կապակցող նյութերը
6. Ընտրել ասֆալտբետոնը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բնութագրել ճանապարհաշինարարական նյութերի հիմնական հատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է գնահատում մեխանիկական հատկությունները,
- բ. ճիշտ է գնահատում ֆիզիկական հատկությունները,
- գ. ճիշտ է գնահատում քիմիական հատկությունները,
- դ. ճիշտ է գնահատում տեխնոլոգիական հատկությունները,
- ե. ճիշտ է գնահատում շահագործական հատկությունները,
- զ. ճիշտ է որոշում նյութերի հատկությունների ցուցանիշի գնահատականը մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է գնահատում ուսուցողական ճանապարհաշինարարական նյութերի հատկությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհաշինարարական նյութերի անհրաժեշտ տեսականի, հիմնական հատկությունների գնահատման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներ, փորձասարքեր և մեթոդական նյութեր, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ընտրել բնական քարային նյութեր

- ա. ճիշտ է դասակարգում բնական քարային նյութերը,
- բ. ճիշտ է դասակարգում լեռնային ապարները,
- գ. ճիշտ է ներկայացնում լեռնային ապարների արդյունահանումը և վերամշակումը,
- դ. ճիշտ է ընտրում բնական քարային նյութերը,
- ե. ճիշտ է իրականացնում քարային նյութերի ընդունումը, պահպանումը և տեղափոխումը,
- զ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջակա միջավայրի պահպանումը լեռնային ապարները արդյունահանելիս և վերամշակելիս:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է դասակարգում և ընտրում

բնական քարային նյութերը, ճիշտ է կատարում եզրահանգումներ քարային նյութի ծակոտկենային և ջրակլանման արդյունքներով, ներկայացնում աշխատանքի և շրջակա միջավայրի պահպանումը լեռնային ապարները արդյունահանելիս և վերամշակելիս:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ բնական քարային նյութերի անհրաժեշտ տեսականի և դրանց հատկությունները բնութագրող պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ընտրել խեցեգործական /կերամիական/ նյութեր

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է դասակարգում խեցեգործական նյութերը,
- բ. ճիշտ է ներկայացնում խեցեգործական նյութերի արտադրությունը,
- գ. ճիշտ է ընտրում խեցեգործական նյութերը,
- դ. ճիշտ է ընտրում ճանապարհային գերաթուրծ աղյուս և այլ խիտ արտադրատեսակները,
- ե. ճիշտ է ընտրում խեցեգործական խիճը և կոպիճը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է դասակարգում և ընտրում խեցեգործական նյութերը, ներկայացնում գրանց կիրառումը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ցցերով, ցցաթաղանթներով և իջեցվող հորերով մեծ խորության հիմքերի կառուցման անհրաժեշտ մեքենասարքավորումներ և տեխնիկական միջոցներ, մեթոդական ուղեցույցներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, աշխատանքի անվտանգության միջոցներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Կազմակերպել հիմքերի ուժեղացումը և վերակառուցումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ռեսանդը`

- ա. ճիշտ է որոշում կառուցվածքների հիմքերի ներբանի մեծացման չափը,
- բ. ճիշտ է կազմակերպում հիմքերի վերակառուցման աշխատանքները,
- գ. ճիշտ է կազմակերպում հիմնատակերի ուժեղացման աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում հիմքերի ուժեղացման և վերակառուցման կազմակերպման աշխատանքները, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ հիմքերի ուժեղացման և վերակառուցման անհրաժեշտ սարքավորումների և տեխնիկական միջոցների մնուշներ ,մոդելներ, մեթոդական ուղեցույցներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, աշխատանքի անվտանգության միջոցներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԹԱՓՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ`

ԱՃՕՇ 5-11-013

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

36 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ`

Տեսական պարապմունք` 18 ժամ

Գործնական աշխատանք` 18 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Ձևավորել ջրահեռացման և ջրթող կառուցվածքների հիդրավլիկ հաշվարկների և գործնական խնդիրների լուծման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

- 1. Ներկայացնել հիդրոստատիկայի հիմունքներ
- 2. Ներկայացնել հիդրոդինամիկայի հիմունքները
- 3. Ընտրել ջրթափները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել հիդրոստատիկայի հիմունքներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է բնորոշում հիդրոստատիկա, հիդրոդինամիկա, ջրաբանություն (հիդրոլոգիա), ջրաերկրաբանություն եզրույթները,
- բ. ճիշտ է բացատրում հիդրոստատիկ ճնշումը
- գ. ճիշտ է ներկայացնում հիդրոստատիկայի հիմնական հավասարումը
- դ. ճիշտ է որոշում շինարարական կառուցվածքների հարթ պատի վրա հիդրոստատիկ ճնշման ուժը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում հիդրոստատիկայի հիմնական հավասարումը և ըստ առաջադրանքի ճիշտ է որոշում շինարարական կառուցվածքների հարթ պատի վրա հիդրոստատիկ ճնշման ուժը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր շինարարական կառուցվածքների երկրաչափական պատկերների սխեմաներ և պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական պարապմունք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել հիդրոդինամիկայի հիմունքները

Ուսանողը՝

- ա. ճիշտ է բնորոշում ջրի հոսանքը և նրա հիդրավլիկական բնութագրերը
- բ. ճիշտ է ներկայացնում հեղուկների շարժման տեսակները,
- գ. ճիշտ է ներկայացնում Բեռնուլիի հավասարումը (առանց արտաձման),
- դ. ճիշտ է բնութագրում բաց հուններում ջրի հավասարաչափ շարժումը,
- ե. ճիշտ է որոշում հոսանքի թույլատրելի արագությունը,
- զ. ճիշտ է կատարում ջրատար առունների հիդրավլիկական հաշվարկը,
- է. ճիշտ է որոշում հոսանքի կենցաղային խորությունը և կենցաղային արագությունը,
- ը. ճիշտ է կիրառում ջրի ելքի հավասարումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում Բեռնուլիի հավասարումը, ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում ջրատար առուների հիդրավիկական հաշվարկը և կիրառում ջրի ելքի հավասարումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր ջրատար առուների երկրաչափական պատկերների սխեմաներ և պլակատներ, դասակարգման պլակատներ, լաբորատոր փորձնական սարքավորումներ, չափիչ սարքեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	10 ժամ
Գործնական պարապմունք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ընտրել ջրթափները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ՌԻՍԱՄՈՂԸ՝

ա. ճիշտ է դասակարգում և ընտրում ջրթափները,

բ. ճիշտ է ընտրում փոքր կամուրջները և ճանապարհային խողովակները որպես լայն շեմքով ջրթափեր:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում ջրթափը ահրաժեշտ հիմնավորումներով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր ջրթափների պատկերների սխեմաներ և պլակատներ, դասակարգման պլակատներ, մոդելներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական պարապմունք՝	4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-014

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

72 ժամ

ԴԱՍԸՆՈԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

Տեսական պարապմունք՝ 36 ժամ
Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ ԱԱՕ 5-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլը:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական շահագործման կազմակերպման անհրաժեշտ կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական շահագործման համակարգը
2. Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործման պայմանները և կատեգորիաները
3. Կազմակերպել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի պահպանումը
4. Գնահատել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական վիճակը
5. Իրականացնել անվադողերի տեխնիկական շահագործում
6. Ընտրել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործական նյութերը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական շահագործման համակարգը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է գնահատում մեքենաների և մեխանիզմների արտադրողականության բարձրացումը, աշխատանքների ինքնարժեքի նվազեցումը, վառելիք-էներգետիկական ռեսուրսների տնտեսումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության փոքրացումը՝ որպես համակարգի բաղկացուցիչներ,
- բ. ճիշտ է բացատրում հիմնական շահագործման ցուցանիշները և սպառողական հատկությունները,
- գ. ճիշտ է բացատրում հուսալիությունը, տեխնոլոգիականությունը, տեխնիկական գեղագիտության ցուցանիշները, էրգոնոմիկական ցուցանիշները, չափորոշման –միասնականացման–համափոխարինելիության աստիճանը,
- դ. ճիշտ է գնահատում մեքենաների աշխատանքի որակի և օգտագործման տնտեսական արդյունավետության կախվածությունը նրանց տեխնիկական վիճակից,
- ե. ճիշտ է բացատրում հուսալիության հիմնական հասկացությունները,
- զ. ճիշտ է կիրառում շինարարական մեքենաների տեխնիկական շահագործման և վերանորոգման ցուցանիշները,
- է. ճիշտ է կազմում մեքենաների և մեխանիզմների շահագործման հրահանգները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է բացատրում ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի հիմնական շահագործման և վերանորոգման ցուցանիշները և հատկությունները, ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում շահագործման հրահանգները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տարբեր տեսակների սխեմաներ և պլակատներ, դասակարգման պլակատներ, մոդելներ, մեքենաների և մեխանիզմների շահագործման հրահանգների օրինակներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործման պայմանները և կատեգորիաները

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում շինարարական մեքենաների շահագործման ընդհանուր պահանջները՝ համաձայն չափորոշիչի,
- բ. ճիշտ է բնութագրում շահագործման ճանապարհային պայմանները՝ տեղանքի ռելիեֆը, ճանապարհի տեխնիկական կատեգորիաները և ծածկույթների տեսակները,
- գ. ճիշտ է բացատրում շահագործման տրանսպորտային պայմանները,
- դ. ճիշտ է շարադրում շահագործման բնակլիմայական պայմանները,
- ե. ճիշտ է թվարկում շահագործման պայմանների կատեգորիաները,
- զ. ճիշտ է գնահատում տեխնիկական վիճակի փոփոխման վրա շահագործման պայմանների (գործոնների) ազդեցությունը,
- է. ճիշտ է իրականացնում շփման և մաշի նվազեցման աշխատանքները,
- ը. ճիշտ է չափում մեքենամասերի մաշվածքները և ստուգում չափման ճշտությունը,
- թ. ճիշտ է կազմակերպում տեխնիկական շահագործումը տարբեր բնակլիմայական պայմաններում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործման պայմանները և կատեգորիաները և գնահատում դրանց տեխնիկական վիճակը, ըստ առաջադրանքի ճիշտ է չափում մեքենամասերի մաշվածքները և ստուգում չափման ճշտությունը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործման պայմանների և կատեգորիաների պլակատներ, մոդելներ, չափում մեքենամասերի մաշվածքների չափման և ստուգում չափման ճշտության ստուգում անհրաժեշտ սարքավորումներ և տեխնիկական միջոցներ, մեթոդական ուղեցույցներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կազմակերպել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի պահպանումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է թվարկում պահպանման եղանակները և կայանատեղերի տեսակները,
- բ. ճիշտ է իրականացնում փակ կայանատեղերում պահպանման գործընթացները,
- դ. ճիշտ է իրականացնում բաց հարթակներում պահպանման գործընթացները,

- ե. ճիշտ է գործարկում շարժիչը շրջապատող օդի ցածր ջերմաստիճանների դեպքում,
- զ. ճիշտ է տեղավորում փակ և բաց կայանատեղերում ճանապարհաշինարարական մեքենաները և մասնագիտացված շարժակազմը,
- է. ճիշտ է կազմակերպում և իրականացնում գազաբալոնային սնման համակարգերով ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի պահպանումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է թվարկում կայանատեղերի տեսակները և ներկայացնում պահպանման գործընթացները , ճիշտ է գործարկում շարժիչը շրջապատող օդի ցածր ջերմաստիճանների դեպքում: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ կայանատեղերի տեսակները տարբեր տեսակների սխեմաներ և պլակատներ, շարժիչի գործարկման ստենդ, գազաբալոնային սնման համակարգի ստենդ, դասակարգման պլակատներ, մոդելներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, մեթոդական ուղեցույցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Գնահատել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական վիճակը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է բացատրում երթևեկության անվտանգությունը երաշխավորող համակարգերի և մեխանիզմների տեխնիկական վիճակին ներկայացվող պահանջները,
- բ. կարողանում է արտաքին զննմամբ և ստուգմամբ ճիշտ գնահատել մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակը,
- գ. ճիշտ է կազմակերպում տեխնիկական արատորոշման գործընթացը,
- դ. ճիշտ է ձևակերպում և լրացնում շահագործման բացթողման և վերադարձի ժամանակ տեխնիկական վիճակի գնահատման փաստաթղթերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ գնահատում մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակը, ճիշտ է ձևակերպում և լրացնում շահագործման բացթողման և վերադարձի ժամանակ տեխնիկական վիճակի գնահատման փաստաթղթերը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակի գնահատման և արատորոշման սխեմաներ և պլակատներ, մոդելներ, տեխնիկական արատորոշման գործընթացի կազմակերպման սարքավորումներ և տեխնիկական միջոցներ, մեթոդական ուղեցույցներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իրականացնել անվադողերի տեխնիկական շահագործում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է բացատրում անվադողերի տեխնիկական վիճակի և երթևեկության անվտանգության կախվածությունը,
- բ. ճիշտ է շարադրում անվադողերի տեխնիկական շահագործման կանոնները,
- գ. ճիշտ է պահում դողաձածկանները և դողախցերը,
- դ. ճիշտ է իրականացնում անվադողերի տեխնիկական սպասարկման և նորոգման գործընթացները,
- ե. ճիշտ է հաշվառում անվադողերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է շարադրում անվադողերի տեխնիկական շահագործման կանոնները, դողաձածկանների և դողախցերի պահումը, ըստ առաջադրանքի ճիշտ է իրականացնում անվադողերի տեխնիկական սպասարկման և նորոգման գործընթացները: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր անվադողերի, դողաձածկանների և դողախցերի տեսականի, սխեմաներ և պլակատներ, մոդելներ, անվադողերի տեխնիկական սպասարկման և նորոգման գործընթացների համար անհրաժեշտ սարքավորումներ և տեխնիկական միջոցներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական պարապմունք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ընտրել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործական նյութերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ընտրում և օգտագործում շարժիչների վառելանյութերը,
- բ. ճիշտ է ընտրում և օգտագործում շարժիչների քսանյութերը,
- գ. ճիշտ է ընտրում և օգտագործում շարժահաղորդակներում օգտագործվող յուղերը և քսուկները,
- դ. ճիշտ է ընտրում և օգտագործում տեխնիկական հեղուկները,
- ե. ճիշտ է պահպանում, նորմավորում և բաշխում վառելիքաքսանյութերը և տեխնիկական հեղուկները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և նորմավորում ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործական նյութերը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործական նյութերի անհրաժեշտ տեսականի, դրանս հատկությունների, պահպանման և բաշխման վերաբերյալ սխեմաներ և պլակատներ, նորմավորման ուղեցույց-մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԱԵՐՈԴՐՈՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՃՕՇ 5-11-015

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ժամ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝ Տեսական պարապմունք՝ 20 ժամ
 Գործնական աշխատանք՝ 34 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-002, <<Ինժեներական գեոդեզիա >> ԱՃՕՇ 5-11-008, <<Ճանապարհաշինարարական նյութեր, հանքային կապակցողներ, ամրացված գրունտներ և այլ նյութեր>> ԱՃՕՇ 5-11-006 << Ճանապարհաշինարարական նյութեր. բնական և արհեստական քարային նյութեր, օրգանական կապակցող նյութեր>> մոդուլները:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների կառուցվածքային տարրերի ընտրման և կիրառման կարողություններ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրաքանչյուր հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը, տրանսպորտա-շահագործական ցուցանիշները, << ճանապարհային ցանցի առկա վիճակը և զարգացման հեռանկարները
2. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների տարրերը
3. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքը
4. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների հատակագծի հիմնական բաղկացուցիչները
5. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը
6. Ներկայացնել ճանապարհի հողային պաստառը
7. Ներկայացնել ճանապարհային պատվածքը

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը, տրանսպորտա-շահագործական ցուցանիշները, << ճանապարհային ցանցի առկա վիճակը և զարգացման հեռանկարները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

ա. ճիշտ է դասակարգում ավտոմոբիլային ճանապարհները և բնութագրում տրանսպորտա- շահագործական ցուցանիշները,

բ. ճիշտ է ներկայացնում ՀՀ ճանապարհային ցանցի առկա վիճակը և զարգացման հեռանկարները,

գ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հիմնական հասկացությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում ավտոմոբիլային ճանապարհի տեսակը և բնութագրում դրա բնութագրում տրանսպորտա- շահագործական ցուցանիշները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման և տրանսպորտա- շահագործական ցուցանիշների բնութագրման շինարարական նորմեր, սխեմաներ և պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների տարրերը

Ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում օտարման շերտը,

բ. ճիշտ է ներկայացնում ճանապարհների հողային պաստառի տարրերը,

գ. ճիշտ է ներկայացնում ճանապարհների արհեստական կառույցների տեսակները,

դ. ճիշտ է ներկայացնում ճանապարհային կահավորանքի տարրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների տարրերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների տարրերի բնութագրման վերաբերյալ սխեմաներ և պլակատներ, մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքը և դրա տարատեսակները,

բ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառը, երթևեկելի մասը, ջրատար առուները և կողնակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքը, դրա տարրերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքի, ինչպես նաև ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառի, երթևեկելի մասի, ջրատար առուների և կողնակների վերաբերյալ սխեմաներ և պլակատներ, հաշվարկի մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 2 ժամ
- Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների հատակագծի հիմնական բաղկացուցիչները ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է բացատրում ավտոմոբիլային ճանապարհների հատակագիծը՝ համաձայն գործող ՀՀ ՇՆ-ին,
- բ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների ուղղագիծ և կորագիծ հատվածները,
- գ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասի լայնացումները կորություններում,
- դ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների թեքուղիները,
- ե. ճիշտ է գնահատում տեսանելիության ապահովումն ավտոմոբիլային ճանապարհներում,
- զ. ճիշտ է ներկայացնում աերոդրոմների կառուցվածքային առանձնահատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հատակագծի հիմնական բաղկացուցիչները, ներկայացնում աերոդրոմների կառուցվածքային առանձնահատկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային տարատեսակ ճանապարհների հատակագծեր, սխեմաներ և պլակատներ, մոդելներ, հաշվարկի մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 4 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը և թեքությունները,
- բ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների նախագծային գիծը և դրա անցկացումը,
- գ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների ուղղաձիգ կորերը,
- դ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հանգույցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը և ավտոմոբիլային ճանապարհների հանգույցները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային տարատեսակ ճանապարհների երկայնական կտրվածքի տեսքեր, գծագրեր, սխեմաներ և պլակատներ, մոդելներ, հաշվարկի մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 2 ժամ
- Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ներկայացնել ճանապարհի հողային պաստառը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհի հողային պաստառի տարրերը,
- բ. ճիշտ է բնութագրում ճանապարհաշինարարական բնահողերը,
- գ. ճիշտ է ներկայացնում հողային պաստառի ձևափոխությունները, տիպային լայնական կտրվածքները,
- դ. ճիշտ է ներկայացնում հողային պաստառի խոնավացման պատճառները, ջրահեռացման համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ներկայացնում ճանապարհի հողային պաստառի տարրերը, ձևափոխությունները, խոնավացման պատճառներն ու ջրահեռացման համակարգը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհի հողային պաստառի գծագրեր, սխեմաներ և պլակատներ, հաշվարկի մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 4 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ներկայացնել ճանապարհային պատվածքը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է դասակարգում ճանապարհային պատվածքները և դրանց կառուցվածքային շերտերը,
- բ. ճիշտ է ընտրում ճանապարհային հիմքերը, դրանց շերտերը,
- գ. ճիշտ է ընտրում ճանապարհային ծածկույթները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում ճանապարհային հիմքերը, դրանց շերտերը և ծածկույթները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային պատվածքը և դրա առանձին տարրերի վերաբերյալ գծագրեր, սխեմաներ և պլակատներ, հաշվարկի մեթոդական նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 4 ժամ
- Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԱԵՐՈԴՐՈՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՆՆՈՒՄ

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-016

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝**

54 ժամ
Տեսական պարապմունք՝ 18 ժամ
Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-009

<<Ինժեներաերկրաբանական հետազննումներ>> մոդուլը:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել հետազննման աշխատանքների կազմակերպման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրաքանչյուր հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Բացատրել տնտեսական հետախուզումները և նրանց խնդիրները
2. Կազմակերպել ավտոմոբիլային ճանապարհների մանրամասն տեխնիկական հետազննումներ
3. Կազմակերպել ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման տեխնիկական հետազննումներ
4. Կազմակերպել աերոդրոմային հրապարակների հետախուզումներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բացատրել տնտեսական հետախուզումները և նրանց խնդիրները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է սահմանում <<բեռնահոսք>>, <<փոխադրումների ծավալ>>, <<բեռնաշրջանառություն>>, <<բեռնալարվածություն>> ցուցանիշները,
- բ. ճիշտ է ներկայացնում ճանապարհատնտեսական հետազննումների նշանակությունը, կազմը և մեթոդները,
- գ. ճիշտ է ներկայացնում հետազննման շրջանի տնտեսական բնութագիրը,
- դ. ճիշտ է հիմնավորում ծրագրի ուղղությունը ըստ տնտեսական հետազննման,
- ե. ճիշտ է ներկայացնում շինարարությունում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության ցուցանիշները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում ճանապարհատնտեսական հետազննումների նշանակությունը, կազմը և մեթոդները, առաջադրված հետազննման շրջանի տնտեսական բնութագիրը, շինարարությունում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության ցուցանիշները:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային տարատեսակ ճանապարհների շինարարությունում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության ցուցանիշների որոշման մեթոդական ուղեցույցներ, հաշվարկների սխեմաներ և պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 2 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմակերպել ավտոմոբիլային ճանապարհների մանրամասն տեխնիկական հետազննումներ

- ա. ճիշտ է ներկայացնում մանրամասն տեխնիկական հետազննումների նշանակությունը և կազմը,
- բ. ճիշտ է կազմակերպում նախապատրաստական աշխատանքները,
- գ. ճիշտ է որոշում հետազննումների դաշտային շրջանի խնդիրները,
- դ. ճիշտ է կազմակերպում հետազննման (արշավա) խմբի օղակների աշխատանքները տարբեր տեղանքային պայմաններում
- ե. ճիշտ է հսկում դաշտային աշխատանքները և կատարման նորմերը
- զ. ճիշտ է պահպանում ավտոմոբիլային ճանապարհների հետազննումների ընթացքում անվտանգության տեխնիկայի պահանջները,
- է. ճիշտ է կազմակերպում գրասենյակային աշխատանքները և ձևակերպում անհրաժեշտ փաստաթղթերը,
- ը. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների նախագծման հետազննական աշխատանքների ավտոմատացված, օդահետազննական վերգետնյա տարածալուսանկարչական, երկրաչափական և էլեկտրոնային հեռաչափության կիրառման առանձնահատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կազմակերպում հետազննման (արշավա) խմբի օղակների աշխատանքները տարբեր տեղանքային պայմաններում, հսկում կատարման նորմերը և, ձևակերպում անհրաժեշտ փաստաթղթերը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների մանրամասն տեխնիկական հետազննումների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, անհրաժեշտ փաստաթղթերի տարբեր ձևանմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, աշխատանքի պաշտպանության միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կազմակերպել ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման տեխնիկական հետազննումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ՈՒՍԱՆՈՂՈՂ՝

- ա. ճիշտ է սահմանում ավտոմոբիլային ճանապարհների վերակառուցում և նորոգում հասկացությունը,
- բ. ճիշտ է հիմնավորում գործող ճանապարհների վերակառուցման անհրաժեշտությունները,

- գ. ճիշտ է ներկայացնում նախապատրաստական շրջանի առանձնահատկությունները,
- դ. ճիշտ է կազմակերպում հետազննական խմբի առանձին օղակների աշխատանքները,
- ե. ճիշտ է ձևակերպում հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կազմակերպում ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման տեխնիկական հետազննումների աշխատանքները տարբեր տեղանքային պայմաններում, հսկում կատարման նորմերը և ձևակերպում հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման տեխնիկական հետազննումներ կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերի տարբեր ձևանմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, աշխատանքի պաշտպանության միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կազմակերպել աերոդրոմային հրապարակների հետազննումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է ներկայացնում աերոդրոմային հրապարակների ընտրման պահանջները,
- բ. ճիշտ է ներկայացնում հետազննական աշխատանքների կազմը,
- գ. ճիշտ է կազմակերպում օդանավակայանային հրապարակների հետազննման աշխատանքները,
- դ. ճիշտ է ձևակերպում հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կազմակերպում օդանավակայանային հրապարակների հետազննման աշխատանքները տարբեր պայմաններում, հսկում կատարման նորմերը և ձևակերպում հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերը: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ աերոդրոմային հրապարակների հետազննումներ կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերի տարբեր ձևանմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, աշխատանքի պաշտպանության միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱԴԱՐՇՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»

ՄՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-017

**ՄՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝**

**90 ժամ
Տեսական պարապմունք՝ 36 ժամ
Գործնական աշխատանք՝ 54 ժամ**

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-015 <<Ավտոմոբիլային ճանապարհների և ատոդրոմների կառուցվածքը>>, ԱՃՕՇ 5-11-016 <<Ավտոմոբիլային ճանապարհների և ատոդրոմների հետազննում>> մոդուլներները:

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների նախագծման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրաքանչյուր հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել նախագծման փուլերը, նախագիծ, աշխատանքային փաստաթղթեր, աշխատանքային նախագիծ:
2. Անցկացնել ավտոմոբիլային ճանապարհների ծրագիծը
3. Նախագծել ճանապարհային պատվածքը
4. Նախագծել մանր ջրհոսքերի վրա ջրթող կառուցվածքներ
5. Նախագծել ճանապարհների երկայնական կտրվածքը:
6. Նախագծել հողային պաստառը և ջրահեռացման կառույցները
7. Ընտրել նախագծվող ավտոմոբիլային ճանապարհների տարբերակը

ԳՆԱՂԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել նախագծման փուլերը, նախագիծ, աշխատանքային փաստաթղթեր, աշխատանքային նախագիծ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում երկփուլ և միափուլ նախագծման կազմը և աշխատանքային փաստաթղթերը,
- բ. ճիշտ է բացատրում տիպային նախագծերը:

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում երկփուլ և միափուլ նախագծման կազմը և աշխատանքային փաստաթղթերը, տիպային նախագծերը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Անցկացնել ավտոմոբիլային ճանապարհների ծրագիծը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում ծրագծի ուղղության վրա ազդող գործոնները,
- բ. ճիշտ է կատարում ծրագծի անցկացումը հարթ, կտրատված և լեռնային տեղանքներում,
- գ. ճիշտ է ներկայացնում ծրագծի անցկացման առանձնահատկությունները հեղեղատների, սողանքների, ապարաթափվածքների, ձնահյուների, ճահիճների, ստորգետնյա խոռոչավոր տեղամասերի, շարժվող ավազների և տարածման շրջաններում, ոռոգվող և հավերժական սառածության պայմաններում,
- դ. ճիշտ է անցկացնում ծրագիծը մեծ և փոքր ջրհոսքերի, գործող ճանապարհների և երկաթգծերի հետ փոխհատումներում,
- ե. ճիշտ է կիրառում գործող ճանապարհների և երկաթգծերի հետ հատումները մեկ մակարդակով,
- զ. ճիշտ է կիրառում գործող ճանապարհների և երկաթգծերի հետ հատումները տարբեր մակարդակներով,
- է. ճիշտ է օգտագործում օդալուսանկարումը ճանապարհների նախագծման ընթացքում
- ը. ճիշտ է օգտագործում տեղանքի բնապատկերը և պահպանում բնապահպանության պահանջները ծրագծման ընթացքում,
- թ. ճիշտ է անցկացնում ծրագիծը տեղագրական քարտեզներով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է անցկացնում ծրագիծը տեղագրական քարտեզներով ,պահպանելով ծրագծի անցկացմանը ներկայացվող տեխնիկական պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների ծրագծերի տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական պարապմունք `	16 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախագծել ճանապարհային պատվածքը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհային պատվածքի հաշվարկման բեռնվածքները,
- բ. ճիշտ է որոշում բերված հաշվարկային ինտենսիվությունը և պահանջվող առաձգականության մոդուլները,
- գ. ճիշտ է ընտրում ճանապարհային պատվածքի տարբերակները,
- դ. ճիշտ է կատարում ճանապարհային պատվածքի ամրության հաշվարկները,
- ե. ճիշտ է կատարում ճանապարհային պատվածքի տարբերակների տնտեսական համեմատումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է ընտրում ճանապարհային պատվածքի կառուցվածքների տարբերակները, կատարում ճանապարհային պատվածքի ամրության հաշվարկները և ճանապարհային պատվածքի տնտեսական համեմատումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային պատվածքի տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ,

կատարման նորմերի և բեռնվածքների հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Նախագծել մանր ջրիոսքերի վրա ջրթող կառուցվածքներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ընրում մանր ջրթող կառուցվածքի տեսակը,
- բ. ճիշտ է որոշում ջրի հաշվարկային ելքը,
- գ. ճիշտ է նախագծում ջրթող խողովակը,
- դ. ճիշտ է նախագծում փոքր կամուրջները,
- ե. ճիշտ է ներկայացնում փոքր ջրթող արհեստական կառուցվածքների ավտոմատացված նախագծումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է նախագծում ջրթող խողովակը և փոքր կամուրջը, պահպանելով ջրթող խողովակի և փոքր կամուրջի նախագծերին ներկայացվող տեխնիկական պահանջները:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ջրթող խողովակի և փոքր կամուրջների տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Նախագծել ճանապարհների երկայնական կտրվածքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է տանում նախագծային գիծը,
- բ. ճիշտ է հաշվում նախագծային զծի տարրերը,
- գ. ճիշտ է ձևավորում երկայնական պրոֆիլը,
- դ. ճիշտ է ներկայացնում լավագույն երկայնական պրոֆիլի ավտոմատացված նախագծումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է նախագծել ճանապարհների երկայնական կտրվածքը, պահպանելով ճանապարհների երկայնական կտրվածքը նախագծերին ներկայացվող տեխնիկական պահանջները:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Նախագծել հողային պաստառը և ջրահեռացման կառույցները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում հողային պաստառի և ջրահեռացման կառույցների տիպային կառուցվածքները

բ. ճիշտ է որոշում հողային աշխատանքների ծավալները,

գ. ճիշտ է նախագծում հողային պաստառը և որոշում հողային աշխատանքների ծավալները ճանապարհի վերակառուցման և հիմնանորոգման դեպքում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է նախագծել հողային պաստառը և ջրահեռացման կառույցները պահպանելով ճանապարհների հողային պաստառների և ջրահեռացման կառույցների նախագծերին ներկայացվող տեխնիկական պահանջները:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառների և ջրահեռացման կառույցների տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, կատարման նորմերի և հաշվարկների սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ընտրել նախագծվող ավտոմոբիլային ճանապարհների տարբերակը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում նախագծվող ճանապարհի շահագործական տեխնիկական ցուցանիշները,

բ. ճիշտ է նախագծում և կազմում անվտանգության գրաֆիկը,

գ. ճիշտ է կազմում վթարայնության գրաֆիկը,

դ. ճիշտ է ընտրում ճանապարհի տարբերակը՝ ըստ տեխնիկա-շահագործական ցուցանիշների,

ե. ճիշտ է ընտրում նախագծվող ճանապարհի տարբերակը՝ ըստ տնտեսական ցուցանիշների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է կազմում անվտանգության և վթարայնության գրաֆիկները, ըստ տեխնիկա-շահագործական և տնտեսական ցուցանիշների ցուցանիշների ճիշտ է ընտրում ճանապարհի տարբերակը:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների տարբեր տիպային նախագծերի փաթեթներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, անվտանգության գրաֆիկի և վթարայնության գրաֆիկի նախագծման ու կազմման սխեմաներ ու պլակատներ, տեխնիկա-շահագործական ցուցանիշների և տնտեսական ցուցանիշների որոշման ուղեցույցներ և պլակատներ ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝	«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱԴԱՐՆԵՐԻ ԱՐՇԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ»		
ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝	ԱՃՕՇ 5-11-018		
ՄՈԴՈՒԼԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	90 ժամ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵԿԸ՝	Տեսական պարապմունք՝	36 ժամ	
	Գործնական աշխատանք՝	54 ժամ	
ՄՈՒՏՔԱՅԻՆ ԴԱՅԱՆՁՆԵՐԸ՝			

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-007 « Գրունտների հատկությունների որոշում և բնահողերի գնահատում >>, ԱՃՕՇ 5-11-008 « Ճանապարհաշինարարական նյութեր, հանքային կապակցողներ, ամրացված գրունտներ և այլ նյութեր>>, ԱՃՕՇ 5-11-006 « Ճանապարհաշինարարական նյութեր բնական և արհեստական քարային նյութեր, օրգանական կապակցող նյութեր>>, ԱՃՕՇ 5-11-11 « Կառուցվածքների ստատիկա >> մոդուլները:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել կամուրջների և ճանապարհների արհեստական այլ կառույցների ընտրության և կիրառման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների կամուրջները և արհեստական կառույցները,
2. Ներկայացնել կամուրջների և արհեստական այլ կառույցների նախագծման հիմնական տվյալները,
3. Ներկայացնել փայտե կամուրջները և սառցաբեկները,
4. Ներկայացնել երկաթբետոնե, բետոնե և քարե կամուրջները և խողովակները,
5. Ներկայացնել մետաղական կամուրջները ավտոմոբիլային ճանապարհներում:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների կամուրջները և արհեստական կառույցները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհներում օգտագործվող արհեստական կառույցների տեսակները,
- բ. ճիշտ է ներկայացնում կամուրջների դասակարգումը,
- գ. ճիշտ է բացատրում արհեստական կառույցներին ներկայացվող հիմնական պահանջները,
- դ. ճիշտ է ներկայացնում կամուրջների և այլ արհեստական կառույցների շինարարության զարգացման ժամանակակից ուղղությունները:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ըստ առաջադրանքի պահանջների սովորողը ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային

ճանապարհներում օգտագործվող արհեստական կառույցների տեսակները, կամուրջների դասակարգումը և դրանց ներկայացվող հիմնական պահանջները:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ավտոմոբիլային ճանապարհների տարբեր կամուրջների և արհեստական կառույցների տիպային նախագծերի փաթեթներ և մոդելներ, առանձին տարրերի նմուշներ, աշխատանքային փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ, դասակարգման սխեմաներ ու պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 4 ժամ
- Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել կամուրջների և արհեստական այլ կառույցների նախագծման հիմնական տվյալները Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում կամրջային անցման տարրերը,
- բ. ճիշտ է ներկայացնում արհեստական կառույցների թռիչքների մասնատումը, նավարկելիության պահանջները և կամրջատակի եզրաչափերը,
- գ. ճիշտ է որոշում արհեստական կառույցների լայնությունը,
- դ. ճիշտ է որոշում կամուրջների հաշվարկային բեռները,
- ե. ճիշտ է ներկայացնում կամուրջների և արհեստական այլ կառույցների հաշվարկման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բացատրել գնագոյացմանը վերաբերող հասկացությունները և մեխանիզմները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում գնի տարբեր մակարդակների կազմը և կապը,
- բ. ճիշտ է ներկայացնում շինարարական արտադրանքի ինքնարժեքի ձևավորման մեխանիզմը,
- գ. ճիշտ է վերաճում անհատական գինը շուկայական գնի,
- դ. ճիշտ է բացատրում աշխատանքի տեխնիկական նորմավորումը,
- ե. ճիշտ է հաշվում աշխատանքի նորմի մեծությունը,
- զ. ճիշտ է օգտագործում աշխատանքի վարձատրության կազմակերպման համակարգի տարրերը,

է. ճիշտ է բնութագրում աշխատանքի վարձատրության ձևերի առանձնահատկությունները,

ը. ճիշտ է ներկայացնում շինարարական աշխատանքների ծախսերի արժեքի հաշվարկի կարգը և հիմնական հոդվածները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Բանավոր հարցեր սովորողին՝ գնագոյացման ընդհանուր հասկացությունների, գնի էլեմենտների վերաբերյալ: Գործնական առաջադրանք որևէ արտադրանքի ինքնարժեքը և գինը հաշվարկելու, շահույթի գումարը որոշելու վերաբերյալ: Սովորողը պետք է ցույց տա գնագոյացման կոնկրետ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե բանավոր հարցադրումներին պատասխանելիս սովորողը հանդես է բերում մտքերը գրագետ և հիմնավոր ներկայացնելու ընդունակություն, իսկ հաշվարկները կատարում է ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական նյութեր, թափանցաթերթիկներ, պրոյեկցիոն սարք:

ՌՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կազմել բիզնես-պլան

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շինարարության և շահագործման գործառույթների պլանավորման համակարգը, դրա կառուցվածքը և հիմնական ցուցանիշները,

բ. ճիշտ է բացատրում բիզնես պլանի դերը կազմակերպության գործունեության համար,

գ. ճիշտ է կազմում բիզնես պլանի բովանդակությունը,

դ. ճիշտ է կատարում շուկայի վերլուծության քայլերը՝ ըստ հաջորդականության,

ե. ճիշտ է կազմում շինարարական և շահագործական աշխատանքների պլանը,

զ. ճիշտ է գնահատում ներդրումների տնտեսական արդյունավետությունը,

է. ճիշտ է կազմում մասնագիտությանը առնչվող բիզնես-պլան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է՝ ըստ կատարման չափանիշների անհատական հանձնարարությունների ամփոփ ներկայացման հիման վրա: Յուրաքանչյուր սովորող պետք է 8-10 էջի սահմաններում ներկայացնի հանձնարարված թեմայի նյութը և պաշտպանի իր առաջարկները: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքը գրագետ և հիմնավոր կատարվի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, ուսուցողական նյութեր, գործնական աշխատանքների նյութեր, մեթոդական ցուցումներ:

ՌՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Հաշվարկել հարկերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում հարկային և մաքսային օրենսդրությանը վերաբերող իրավական ակտերը,
- բ. ճիշտ է բացատրում հարկերի առանձին տեսակների հաշվարկման կարգը և առանձնահատկությունները,
- գ. ճիշտ է հաշվարկում հարկերի գումարները շինարարական աշխատանքների համար:
- դ. ճիշտ է հաշվարկում հարկերի գումարները շահագործական աշխատանքների համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է հարց ու պատասխանի, թեստային առաջադրանքի և գործնական առաջադրանքի հիման վրա: Սովորողը պետք է, ընդհանուր առմամբ, ցուցաբերի հարկային և մաքսային հիմնական հասկացությունների վերաբերյալ բավարար գրագիտություն և տիպային օրինակներում ճիշտ հաշվարկներ կատարի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան հարկային օրենքների և դրանց կիրառման վերաբերյալ հրահանգներ, նախապատրաստված ուսուցողական նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 8 ժամ
- Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ներկայացնել կառավարման մեթոդները և կառավարման ապարատի կառուցվածքը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի էությունը և խնդիրները,
- բ. ճիշտ է ներկայացնում կառավարման մեթոդների բովանդակությունը,
- գ. ճիշտ է ընդունում մասնագիտական գործառույթներում կառավարչական որոշումները,
- դ. ճիշտ է կազմակերպում կոլեկտիվի աշխատանքը,
- ե. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի առանձնահատկությունները ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարության և շահագործման գործառույթներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ըստ առաջադրանքի պահանջների ընդհանուր առմամբ, ընդունված են լինում որոշումներ, որոնց անհրաժեշտ հիմնավորում է տրված, ինչպես նաև կառավարման տեխնոլոգիաներին վերաբերող հարցերին գրագետ պատասխաններ է տրվում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, սխեմաներ, ցուցադրական նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ներկայացնել կազմակերպության բնութագիրը, տեսակները, ստեղծման և գրանցման կարգը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է բացատրում «կազմակերպություն» հասկացությունը,
- բ. ճիշտ է բնութագրում կազմակերպությունների տեսակները և դրանց տարբերիչ առանձնահատկությունները,
- գ. ճիշտ է կազմում և լրացնում կազմակերպության ստեղծման և գրանցման անհրաժեշտ փաստաթղթերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե, ըստ առաջադրանքի պահանջների ճիշտ է ներկայացվում կազմակերպության բնութագիրը, տեսակները, ստեղծման և գրանցման կարգը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, սխեմաներ, կազմակերպության ստեղծման և գրանցման կարգի վերաբերյալ խորհրդատվական նյութեր, ցուցադրական նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	4 ժամ		
Գործնական պարապմունք՝	4 ժամ		
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝		«ՄԱՐՔԵԹԻՆԳ»	
ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝		ԱՃՕՇ 5-11-025	
ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	72 ժամ		
ԴԱՍՆԵԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝	Տեսական պարապմունք՝	36 ժամ	
	Գործնական աշխատանք՝	36 ժամ	

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել մարքեթինգային մտածելակերպ, շուկայագիտության գործառույթների և մարքեթինգային գործիքների կիրառման մեթոդների վերաբերյալ անհրաժեշտ կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել մարքեթինգի էությունը և հիմունքները
2. Բնորոշել մարքեթինգի հիմնարար հասկացությունները
3. Ներկայացնել մարքեթինգային գործընթացը
4. Կառավարել հարաբերությունները սպառողների հետ
5. Ելնելով սահմանված նպատակներից իրականացնել SWOT վերլուծություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 Ներկայացնել մարքեթինգի էությունը և հիմունքները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում մարքեթինգի բովանդակությունը,
- բ. ճիշտ է բնորոշում մարքեթինգի դերը և գործնական կիրառման ուղղությունները,
- գ. ճիշտ է սահմանում նպատակները, խնդիրները և գործառույթները կազմակերպության տնտեսական գործունեության բնագավառում,
- դ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգային պլանավորման սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գրավոր քննության հարցաշար, որի միջոցով կստուգվեն սովորողի տեսական գիտելիքները: Սովորողին կտրվի առաջադրանք՝ ներկայացնել շուկայագիտության հիմնական հասկացությունները, գործունեության հիմնական սկզբունքները, ուղղությունները, գործառույթները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում պլանավորման գործընթացի հիմնական փուլերը, ընտրում է հետազոտման ճիշտ մեթոդ, հիմնավորում այն և ճիշտ է պատասխանում հարցերի 80%-ին:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Մարքեթինգի հիմնական նպատակները և պլանավորման սկզբունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում մասնագիտական գրականությունից ստացած գիտելիքների և պրակտիկայի ընթացքում ձեռք բերած ունակությունների, դրանց գործնական կիրառությամբ ստացած կարողությունների հիման վրա: Ուսումնառությունն իր մեջ պետք է ընդգրկի նաև հաջողված պատմությունների ուսումնասիրում: Անհրաժեշտ է ունենալ գրականություն, պայմանական շուկայի տեղաբաշխման սխեմա, ինտերնետ կապով համակարգիչ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բնորոշել մարքեթինգի հիմնարար հասկացությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում սպառողական կարիքները, պահանջմունքները, պահանջարկը և դրանց վերլուծության անհրաժեշտությունը մարքեթինգային միջոցառումների մշակման աշխատանքներում,
- բ. ճիշտ է բնութագրում շուկան, դրա տեսակները և գործողության մեխանիզմները,
- գ. ճիշտ է բնորոշում կազմակերպության նպատակային սպառողներին և շուկայի սեգմենտը,
- դ. ճիշտ է բնորոշում մրցակցությունը,
- ե. ճիշտ է բնորոշում ապրանքը և ներկայացնում է դրա դասակարգման մոտեցումները,
- զ. ճիշտ է բնորոշում գինը, դրա վրա ազդող գործոնները և ներկայացնում է գնի սահմանման նշանակությունը կազմակերպության համար :

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գործնական առաջադրանք և տեսական հարցեր, որի թեման է՝ Հետազոտել պայմանական շուկան, վերլուծել ստացված արդյունքները և ընդունել որոշում: Լրացուցիչ հարցերը տրվում են պարզաբանումների նպատակով: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը հետազոտման ժամանակ օգտագործել է մարքեթինգի բոլոր հնարքները՝ հատվածավորում, նպատակային հատվածների ընտրություն, ապրանքի դիրքավորում և այլն: Արդյունքից ելնելով ընդունել է տրամաբանական որոշում:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Մարքեթինգային ռազմավարության հիմնական նպատակներն ու ուղղությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ընթացքում ստացած կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ գրականություն, ինտերնետ կապ, մարքեթինգային տեղեկատվության աղբյուրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 10 ժամ
- Գործնական պարապմունք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել մարքեթինգային գործընթացը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է նկարագրում մարքեթինգային գործընթացը,
- բ. ճիշտ է բնորոշում մարքեթինգային տեղեկատվությունը, դրա տեսակները, հավաքման եղանակները,
- գ. ճիշտ է բնորոշում մարքեթինգային հետազոտությունների էությունը, իրականացման ուղղությունները, մեթոդները,
- դ. ճիշտ է բնորոշում մարքեթինգային ռազմավարական պլանավորման գործընթացը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գործնական աշխատանք և բանավոր հարցեր, որի թեման է՝ Պլանավորել մարքեթինգային ռազմավարական գործընթացը: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում և բնորոշում մարքեթինգային ռազմավարական պլանավորման գործընթացը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ծառայությունների մարքեթինգային հետազոտությունների էությունը, ռազմավարական պլանավորման գործընթացը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ընթացքում ստացած կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ գրականություն, ինտերնետ կապ, մարքեթինգային տեղեկատվության աղբյուրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 8 ժամ
- Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կառավարել հարաբերությունները սպառողների հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Ուսանողը՝
- ա. ճիշտ է կատարում ապրանքի արժեքի սահմանման գործընթացը,
- բ. ճիշտ է սահմանում սպառողի կողմից գնման գործընթացը,
- գ. ճիշտ է նկարագրում վաճառքի խթանման համակարգը և փուլերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գրավոր քննության հարցաշար, որի կառուցման ընթացքում հաշվի առնել հետևյալ թեմաները. գովազդի կազմակերպում, խոսքի կոլտուրայի և էթիկայի նորմերի պահպանման կարևորությունը, սպառողների շահերից բխող թույլատրելի գիշումներ, հաճախորդ չկորցնելու խնդիրը և այլն:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Սպառողների հետ հարաբերությունների կազմակերպումը և իրականացումը, կառավարման համակարգի ներդրման առանձնահատկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում արտադրական պրակտիկայի ընթացքում կատարած հետազոտությունների և ստացած կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ գրականություն, պրակտիկայի հաշվետվություններ, մարքեթինգային տեղեկատվության աղբյուրներ, ինտերնետ կապ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ելնելով սահմանված նպատակներից իրականացնել SWOT վերլուծություն ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում SWOT վերլուծության նպատակը,
- բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպության ներքին միջավայրի կառուցվածքը և այն ձևավորող գործոնները,
- գ ճիշտ է ներկայացնում կազմակերպության արտաքին միջավայրի կառուցվածքը և այն ձևավորող գործոնները
- դ. ճիշտ է ներկայացնում SWOT վերլուծության գործընթացը,
- ե. ճիշտ է կարողանում մշակել SWOT վերլուծական ծրագիր և վերլուծել այն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ըստ առաջադրանքի պահանջների ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացվում SWOT վերլուծության գործընթացը, կարողանում ճիշտ մշակել SWOT վերլուծական ծրագիրը և վերլուծել այն:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, սխեմաներ, ցուցադրական նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 6 ժամ
- Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-026

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

54 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝

Տեսական պարապմունք՝	20 ժամ
Գործնական աշխատանք՝	34 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման, ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շինարարության և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման անհրաժեշտ կարողություններ :

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրաքանչյուր հետո ուսանողը պետք է կարողանա՝

- 1.Ներկայացնել կենսագործունեության միջավայրի վտանգավոր ու վնասակար գործոնները
- 2.Բնութագրել աշխատանքային տեղամասը, պահպանել աշխատանքի պաշտպանության հիմնական պահանջները
- 3.Ներկայացնել շրջակա միջավայրի պաշտպանության հիմնական միջոցառումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.Ներկայացնել կենսագործունեության միջավայրի վտանգավոր ու վնասակար գործոնները ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է ներկայացնում մարդու օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է դասակարգում թունավոր և վնասակարար արտադրական գործոնները,
- գ. ճիշտ է լուծում կենսագործունեության անվտանգության ապահովման իրավական նորմատիվ հարցերը,
- դ. ճիշտ է լուծում կենսագործունեության անվտանգության ապահովման տեխնիկական և կազմակերպչական հարցերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում մարդու օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների վերաբերյալ պլակատներ, թունավոր և վնասակարար արտադրական գործոնների դասակարգման պլակատներ, նորմատիվ – իրավական փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մարդու օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների վերաբերյալ պլակատներ, թունավոր և վնասակարար արտադրական գործոնների դասակարգման պլակատներ, նորմատիվ – իրավական փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բնութագրել աշխատանքային տեղամասը, պահպանել աշխատանքի պաշտպանության հիմնական պահանջները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Ուսանողը`

- ա. ճիշտ է բնութագրում բարենպաստ ու անվտանգ աշխատանքային պայմանները,
- բ. ճիշտ է բացատրում մեքենաների և մեխանիզմների անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները,
- գ. ճիշտ է կիրառում կոլեկտիվ պաշտպանության միջոցները և անհատական պաշտպանության միջոցները,
- դ. ճիշտ է կիրառում տեխնոլոգիական անվտանգության ապահովման միջոցառումները,
- ե.ճիշտ է պահպանում շինարարական կազմակերպությունների, արտադրամասերի և տեղամասերի կառուցվածքին և պահպանմանը ներկայացվող կենսագործունեության պահանջները,
- զ. ճիշտ է պահպանում ճանապարհաշինարարական մեքենաների և տեխնոլոգիական սարքավորումների շահագործման ժամանակ անվտանգության պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրանքի պահանջների ճիշտ է կիրառում անհատական պաշտպանության միջոցները և տեխնոլոգիական անվտանգության ապահովման միջոցառումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ կոլեկտիվ պաշտպանության միջոցներ, անհատական պաշտպանության միջոցները, շինարարական կազմակերպությունների, արտադրամասերի և տեղամասերի կառուցվածքին և պահպանմանը ներկայացվող կենսագործունեության պահանջների վերաբերյալ դիտակտիկ նյութեր, պլակատներ, անվտանգության պահանջների վերաբերյալ նորմատիվ – տեխնիկական փաստաթղթերի նմուշներ, մոդելներ, ուսումնական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 8 ժամ
Գործնական աշխատանք` 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել շրջակա միջավայրի պաշտպանության հիմնական միջոցառումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է բացատրում աղետների առաջացման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները,
- բ. ճիշտ է բնութագրում բնածին աղետները,
- գ. ճիշտ է բնութագրում տեխնոժին աղետները,
- դ. ճիշտ է թվարկում բնածին վտանգների տեսակները,
- ե. ճիշտ է իրագործում շրջակա միջավայրի պաշտպանության հիմնական միջոցառումները ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարության և շահագործման ընթացքում և իրականացնում դրանց վերահսկումը,
- զ. ճիշտ է բացատրում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգի խնդիրներն ու գործառույթությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ըստ առաջադրված տվյալների և պահանջների, ճիշտ է ներկայացնում շրջակա միջավայրի պաշտպանության հիմնական միջոցառումները ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարության և շահագործման ընթացքում, ճիշտ է բացատրում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգի խնդիրներն ու գործառույթությունները <<-ում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ բնածին և տեխնոժին աղետների բնութագրման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության համակարգի խնդիրների ու գործառույթությունների վերաբերյալ պլակատներ, նորմատիվ – տեխնիկական փաստաթղթերի նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 8 ժամ
Գործնական աշխատանք` 14 ժամ

ՍՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ՝

ԱՃՕՇ 5-11-027

**ՍՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝**

**72 ժամ
Տեսական պարապմունք՝ 28 ժամ
Գործնական աշխատանք՝ 44 ժամ**

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

ՍՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել կազմակերպությունում ստորաբաժանման աշխատակիցների արդյունավետ կառավարման կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Բնորոշի աշխատակազմի կառավարման բովանդակությունը
2. Մշակի աշխատանքային ծրագիր
3. Մշակի աշխատակիցների գործառնական պարտականությունները
4. Գնահատի և հսկի աշխատակազմի աշխատանքը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 . Բնորոշել աշխատակազմի կառավարման բովանդակությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում մարդկային ռեսուրսի կառավարման հիմնական դրույթները,
- բ. ճիշտ է ներկայացնում մարդկային ռեսուրսի դերը, նշանակությունը, հասկացությունը, զարգացման կարևորությունը,
- գ. ճիշտ է բնորոշում մարդկային ռեսուրսի կառավարման սկզբունքները, մեթոդները,
- դ. ճիշտ է բնորոշում աշխատակիցների զարգացմանն ուղղված վերապատրաստման ձևերը,
- ե. ճիշտ է ներկայացնում մարդկային ռեսուրսի շահագրգռման անհրաժեշտությունը, ձևերը, մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Բանավոր հարցեր և անհատական աշխատանք: Սովորողին կտրվի հարցեր մարդկային ռեսուրսի կառավարման հիմնական հասկացությունների, սկզբունքների, ձևերի վերաբերյալ: Ուսանողը պետք է ճիշտ մեկնաբանի մարդկային ռեսուրսի կարևորությունը կազմակերպության գործունեության արդյունավետության ապահովման գործում: Բացատրի մարդկային ռեսուրսի զարգացման, շարունակական, լրացուցիչ կրթության ապահովման կարևորությունը, ներկայացնի վերապատրաստման ձևերը: Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին կտրվի առաջադրանք՝ ավտոմոբիլային ճանապարհների կամ աերոդրոմների շինարարության և շահագործման ընթացքում, կամ իրավիճակում, որն է գործընթացի կազմակերպում: Առաջադրանքը պետք է պարունակի այնպիսի բաղադրիչներ, որոնց միջոցով կբացահայտվեն՝

Կառավարման մեթոդների կիրառման կարողությունները՝
վերապատրաստման ձևերի
շահագրգռման մեթոդների և մեխանիզմների կիրառումը՝
Նախանշվեն վերապատրաստման կարիքները և պարբերականությունը

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե սովորողը բանավոր հարցումներին կպատասխանի ճիշտ և գործնական աշխատանքում կցուցաբերի նախաձեռնողականություն և նպատակը ապահովելու

համար կտա տրամաբանական լուծումներ՝ կիրառելով մարդկային ռեսուրսի կառավարման սկզբունքները, մեթոդները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Տեսական ուսուցում և դերային խաղեր: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական նյութեր, իրավիճակների նմանական նյութեր:

ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6	ժամ
Գործնական աշխատանք՝	8	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մշակել աշխատանքային ծրագիր

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության աշխատանքային ծրագրի նպատակները, կառուցվածքը, այն կազմելու սկզբունքներն ու մոտեցումները,

բ. ճիշտ է կազմում աշխատանքային ծրագիրը՝ ընդունված չափանիշներին համապատասխան:

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Բանավոր հարցեր և անհատական աշխատանք: Մովորողին կտրվի հարցեր աշխատանքային պլանը կազմելու նպատակների, խնդիրների վերաբերյալ: Տրվում է առաջադրանք՝ կազմել ավտոմոբիլային ճանապարհների կամ աերոդրոմների շինարարություն կամ շահագործում իրականացնող ընկերության ստորաբաժանման աշխատանքային պլան կազմելու՝ ելնելով կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներից: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե այն իր մեջ ընդգրկում է աշխատանքի բովանդակությունը, ելնելով նպատակներից՝ հիմնավորումը, իրականացման ժամկետները, պատասխանատու կատարողները: Ապահովում է կազմակերպության առջև դրված խնդիրների իրագործումը՝ պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Դասախոսություն, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, արտադրական իրավիճակների նմանական նյութեր:

ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6	ժամ
Գործնական աշխատանք՝	12	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Մշակել աշխատակիցների գործառական պարտականությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է կազմում աշխատանքի նկարագրությունը,

բ. ճիշտ է մշակում և ներկայացնում յուրաքանչյուր աշխատակցին ներկայացվող պահանջները,

գ. ճիշտ է մշակում աշխատակիցների պարտականություններն ու իրավունքները,

դ. ճիշտ է կատարում աշխատանքի բաժանում:

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գրավոր անհատական աշխատանքի և բանավոր ներկայացման միջոցով: Տրվում է առաջադրանք՝ կազմել ավտոմոբիլային ճանապարհների կամ աերոդրոմների շինարարություն կամ շահագործում իրականացնող ընկերության որևէ գործընթաց: Դրա հիման վրա սովորողը պետք է մշակի և ներկայացնի աշխատանքի նկարագրությունը, այդ աշխատանքն իրականացնելու համար սահմանի պահանջներ աշխատակիցների նկատմամբ, ձևակերպի անհրաժեշտ հմտությունները, կազմի պարտականությունների շրջանակը և կատարի աշխատանքի բաժանում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե աշխատանքների նկարագրությունները համահունչ են մասնագիտական գործընթացին, ապահովում են դրա իրականացումը, ապահովում են բոլոր աշխատակիցների հավասարաչափ ծանրաբեռնվածությունը, ներառում են աշխատանքի բնույթը, գործողությունների համար անհրաժեշտ կարողությունները և չեն հակասում ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, ուսուցողական նյութեր, գործնական աշխատանքների նյութեր,

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8	ժամ
Գործնական աշխատանք`	12	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Գնահատել և հսկել աշխատակազմի աշխատանքը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում կատարված աշխատանքների վերլուծության եղանակներն ու մեթոդները,
- բ. ճիշտ է մշակում աշխատանքի վերահսկման համապատասխան պաշտոնական հրահանգներն ու չափորոշիչները,
- գ. ճիշտ է իրականացնում աշխատակիցների գործունեության վերահսկման գործընթացը,
- դ. ճիշտ է կատարում արդյունքների չափումը և գնահատումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Բանավոր հարցեր և անհատական աշխատանք: Տրվում է առաջադրանք` ավտոմոբիլային ճանապարհների կամ աերոդրոմների շինարարություն կամ շահագործում իրականացնող ընկերության ստորաբաժանման իրականացրած գործընթացի նկարագրություն: Մոլորոդը ընտրում է աշխատանքի վերլուծության իրականացման ճիշտ մեթոդ, մշակում է համապատասխան պաշտոնական հրահանգներ ու չափորոշիչներ, ներկայացնում է որակի վերահսկման, արդյունքների չափման և գնահատման մեթոդը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է ընտրել աշխատանքի վերլուծության եղանակը և մեթոդը` հիմնավորելով, որակի ապահովման համար մշակել է հրահանգներ և սահմանել չափորոշիչներ, ընտրել է որակի հսկման մեթոդը, կազմել է աշխատանքների արդյունքների չափման և աշխատակիցների գնահատման մեթոդը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, ուսուցողական նյութեր, գործնական աշխատանքների նյութեր,

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8	ժամ
Գործնական աշխատանք`	12	ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ`

«ՈՐԱԿԻ ՀՍՎՈՂՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ`

ԱՃՕՇ 5-11-028

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

54 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ`

Տեսական պարապմունք`	20	ժամ
Գործնական աշխատանք`	34	ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ԴԱՀԱՆՁՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Ձևավորել աշխատակիցների աշխատանքը, աշխատակիցների կողմից մատուցվող ծառայությունների որակը վերահսկելու, կազմակերպությունում կիրառվող տեխնոլոգիական սարքավորումների, հարմարանքների և գործիքների նպատակային շահագործումն ապահովելու կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

- 1. Ապահովել ծառայությունների մատուցման՝ սպառողին ընդունելի որակ:
- 2. Հսկել աշխատակիցների կողմից աշխատատեղի մաքրության, տեխնոլոգիական սարքավորումների, հարմարանքների և գործիքների օգտագործման և պահպանման նորմերի կիրառումը, դասավորվածությունը:
- 3. Հսկել աշխատակիցների կողմից հաճախորդների սպասարկման կուլտուրայի կանոնների պահպանումը:
- 4. Սահմանել ծառայությունների մատուցման որակի հսկողության հայեցակարգ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ապահովել ծառայությունների մատուցման՝ սպառողին ընդունելի որակ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում ծառայությունների նպատակայնությունը, արդյունքը,
- բ. ճիշտ է ներկայացնում որակի հասկացությունը տարաբնույթ ծառայությունների պարագայում,
- գ. ճիշտ է ներկայացնում շինարարության որակին ներկայացվող և որակի հսկման հիմնական պահանջները,
- դ. ճիշտ է ներկայացնում մատուցվող ծառայությունների որակի ապահովման եղանակներն ու միջոցները,
- ե. ճիշտ է ներկայացնում շինարարական արտադրանքի որակի ստուգման աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գործնական աշխատանք, որի թեման է՝ Բնութագրել կոնկրետ ձեռնարկության մատուցած ծառայությունների որակը և նշել նրա բարելավման ուղիները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը հանգամանորեն վերլուծել է իրականացվող արտադրության և/կամ մատուցվող ծառայությունների առանձնահատկությունները, արել է տրամաբանորեն հիմնավորված առաջարկներ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Արտադրանքի որակը, նորոգման որակը, որակի կառավարման համակարգը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ գրականություն, տարածաշրջանի բնակչության էթնիկական կազմի վերաբերյալ տեղեկատվություն, տարածաշրջանում սպասարկող օբյեկտների բաշխման սխեման, ինտերնետ կայքի համակարգիչ, ամսագրեր, լրագրեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	8 ժամ
Գործնական պարապմունք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հսկել աշխատակիցների կողմից աշխատատեղի մաքրության, տեխնոլոգիական սարքավորումների, հարմարանքների և գործիքների օգտագործման և պահպանման նորմերի կիրառումը, դասավորվածությունը

ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, հարմարանքների և գործիքների նպատակայնությունը, ծագման պատկանելությունը,

բ.ճիշտ է ներկայացնում սպասարկման ամբողջ ընթացքում կիրառվող նորմերը, դրանց անհրաժեշտությունն ու հետևելու կարգը,

գ.ճիշտ է ապահովում իր ստորաբաժանման արտադրական տարածքների և մեքենասարքավորումների պատշաճ շահագործումն ու պահպանումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Բանավոր հարց ու պատասխան: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը անթերի պատկերացնում է ձեռնարկության սարքավորումների, գույքի քանակը, նրանց տեխնիկական բնութագրերը, սպասարկման նորմատիվները: Պատկերացնում է իր պատասխանատվությունը՝ նշված հարցերի առնչությամբ ներքին կարգապահական կանոններին հսկելու հարցում:

ԾՐԱԳՐԱՑԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Աշխատատեղի կազմակերպման հիմունքները, հիմնական տեխնոլոգիական սարքավորումները, հարմարանքները և գործիքները: Աշխատատեղի հարմարադասման նախընտրելի տարբերակը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում արտադրական պրակտիկայի ընթացքում ստացած գիտելիքների և կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ կազմակերպությունում օգտագործվող սարքավորումների և միջոցների տեխնիկական անձնագրային տվյալներ, հաշվապահական տվյալներ՝ սարքավորումների մաշվածքի և ծառայողական ժամկետների մասին:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.Հսկել աշխատակիցների կողմից հաճախորդների սպասարկման կուլտուրայի կանոնների պահպանումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա.ճիշտ է ներկայացնում հաճախորդ-աշխատակից փոխհարաբերությունը,

բ.ճիշտ է բնութագրում «սպասարկման կուլտուրա» հասկացությունը,

գ.ճիշտ է նկարագրում հսկողության այն քայլերը, որոնք բացահայտում են սպասարկման ծառայության իրական պատկերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Քննական հարցաշար: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը գիտի յուրաքանչյուր աշխատակցի ծառայողական պարտականությունները, ուշադրություն է դարձնում աշխատակիցների արտաքին տեսքին, հագուստի դիզայնին: Աշխատանքի արդյունքում՝ հաճախորդը գոհ է կոլեկտիվի աշխատանքից:

ԾՐԱԳՐԱՑԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Հաճախորդների սպասարկման կուլտուրայի հիմնական կանոնները և դրանց պահպանման անհրաժեշտությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և արտադրական պրակտիկայի ընթացքում կատարած դիտարկումների արդյունքների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ՝ բողոքի և առաջարկությունների գիրք, ձեռնարկության այցեքարտեր, ինտերնետ կայքով համակարգիչ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մահմանել ծառայությունների մատուցման որակի հսկողության հայեցակարգ

- ա. ճիշտ է նկարագրում սպասարկման ամբողջ ընթացքը,
- բ. ճիշտ է ներկայացնում սպասարկման գործընթացի փոխկապակցված օղակները,
- գ. ճիշտ է նկարագրում իր և հաճախորդի շփման եզրերը,
- դ. ճիշտ է կազմում ծառայությունների մատուցումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գործնական առաջադրանք, որի թեման է՝ Ոչ մեծ կազմակերպության համար կազմել ծառայությունների մատուցման որակի հսկողության հայեցակարգ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե փաստաթղթում ընդգրկված են որակի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ հուսալիություն, ծառայության ժամկետի երկարակետություն, ընկալելի որակ և այլն:

ԾՐԱԳՐԱՑԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Սպասարկման գործընթացի հիմնական օղակները և դրանց փոխկապակցվածությունը: Ծառայությունների մատուցման որակի ապահովման հիմնական պահանջները և դրանց ապահովումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ժամանակ ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ նորմատիվ փաստաթղթեր, գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	3 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ, ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ, ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՃՕՇ 5-11-029

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	54 ժամ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝	Տեսական պարապմունք՝ 20 ժամ
	Գործնական աշխատանք՝ 34 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ձևավորել ծառայությունների և գործընթացների լիցենզավորման և հավաստագրման, ինչպես նաև ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շինարարության և շահագործման գործընթացներում կիրառվող փաստաթղթաշրջանառության իրականացման անհրաժեշտ կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել լիցենզավորման գործընթացը և տրման կարգը
2. Ներկայացնել հավաստագրման գործընթացները

3. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների և անբողոքների շինարարության, շահագործման և պահպանման կազմակերպման ընթացքում շրջանառվող փաստաթղթերը և ձևակերպման կարգը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել լիցենզավորման գործընթացը և տրման կարգը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում լիցենզավորման անհրաժեշտությունը և նպատակները,
- բ. ճիշտ է ներկայացնում լիցենզիայի մասին օրենքի հիմնական հասկացությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում շինարարության ոլորտում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները:
- դ. ճիշտ է ներկայացնում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման կամ փորձաքննության կամ շինարարության իրականացման լիցենզիայի տրման կարգը,
- ե. ճիշտ է ներկայացնում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման լիցենզիայի տրման կարգը,
- զ. ճիշտ է ներկայացնում ինժեներական հետազննման իրականացման լիցենզիայի տրման կարգը,
- է. ճիշտ է ներկայացնում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության իրականացման լիցենզիայի տրման կարգը,
- ը. ճիշտ է ներկայացնում լիցենզիայի գործողության դադարեցման և վերականգնման կարգը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ՝ լիցենզավորման գործընթացին և տրման կարգին առնչվող ՀՀ համապատասխան օրենքների հոդվածների ու լիցենզավորման գործընթացը կարգավորող այլ նորմատիվ ակտերի մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ թվարկել լիցենզիայի մասին ՀՀ օրենքի առանցքային հոդվածները և շինարարության ոլորտում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և տրման, դադարեցման և վերականգնման կարգի վերաբերյալ նորմատիվային ակտերը: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Լիցենզիայի մասին օրենքը, նորմատիվ ակտերը:

ՄԵԹՈՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ժամանակ ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ լիցենզավորմանն առնչվող նորմատիվ փաստաթղթերի ողջ տեսականին, մասնագիտական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել հավաստագրման գործընթացները

- ա. ճիշտ է բացատրում սերտիֆիկացման նշանակությունը և անհրաժեշտությունը, նպատակները,
- բ. ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման իրավական հիմքերը, գործառույթները և փուլերը,
- գ. ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման գործող կարգերը,
- դ. ճիշտ է ներկայացնում ծառայությունների սերտիֆիկացման նախապատրաստման փուլերը,
- ե. ճիշտ է ներկայացնում գեոդեզիական աշխատանքների սերտիֆիկացման կարգը,

գ. ճիշտ է ներկայացնում ճանապարհաշինարարական մեքենաների և ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայությունների սերտիֆիկացման կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանքներ` սերտիֆիկացման գործընթացին և տրման կարգին առնչվող ՀՀ համապատասխան օրենքների հոդվածների ու սերտիֆիկացման գործընթացը կարգավորող այլ նորմատիվ ակտերի մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք` թվարկել սերտիֆիկացման մասին ՀՀ օրենքի առանցքային հոդվածները, ներկայացնել գեոդեզիական աշխատանքների և ճանապարհաշինարարական մեքենաների ու ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայությունների սերտիֆիկացման կարգը: Արդյունքը կհամարվի ձեռքբերված` կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Սերտիֆիկացման իրավական հիմքերը և նորմատիվ ակտերը:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ժամանակ ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ սերտիֆիկացմանն առնչվող նորմատիվ փաստաթղթերի ողջ տեսականին, մասնագիտական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 6 ժամ

Գործնական պարապմունք` 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շինարարության, շահագործման և պահպանման կազմակերպման ընթացքում շրջանառվող փաստաթղթերը և ձևակերպման կարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա.ճիշտ է ներկայացնում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի տեսակները, նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները և փաստաթղթերի մշակման փուլերը,

բ. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերը և դրանց պահանջները,

գ.ճիշտ է ներկայացնում շինարարության ընթացքի և շահագործման հանձնման մասին ակտերը, որոշումները, , զեկուցագրերը, ամփոփագրերը և այլ փաստաթղթերը,

դ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման և նորոգման կազմակերպման ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակները,

ե.ճիշտ է կատարում շինարարական կառուցվածքների, շինվածքների, նյութերի և սարքավորումների պահանջարկի ամփոփագրի ձևակերպումը,

զ. ճիշտ է ներկայացնում և կատարում աշխատանքների իրականացման օրացույցային պլանի ձևակերպումը,

է. ճիշտ է կատարում շինարարական կառուցվածքների, շինվածքների, նյութերի և սարքավորումների ստացման ժամկետագրի ձևակերպումը,

ը. ճիշտ է կատարում օբյեկտի բանվորական կադրերի շարժման ժամկետագրի ձևակերպումը,

թ. ճիշտ է կատարում օբյեկտների հիմնական շինարարական մեքենաների շարժման ժամկետագրի ձևակերպումը,

ժ. ճիշտ է կատարում ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեխանիզմների հաշվառման մատյանը: Ժա. ճիշտ է կատարում նյութերի հաշվառման պահեստային քարտի ձևակերպումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գործնական առաջադրանք, որի թեման է՝ ընտրել ավտոմոբիլային ճանապարհների և անբողբոջների շինարարության, շահագործման և պահպանման կազմակերպման ոչ մեծ կազմակերպության համար անհրաժեշտ փաստաթղթերը և ճիշտ ձևակերպել դրանք: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե փաստաթղթերը ճիշտ են ձևակերպված:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Շրջանառվող փաստաթղթեր և դրանց ձևակերպումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ժամանակ ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ շրջանառվող նորմատիվ փաստաթղթերի ողջ տեսականին, մասնագիտական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Սահմանել ծառայությունների մատուցման որակի հսկողության հայեցակարգ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում սպասարկման ամբողջ ընթացքը,
- բ. ճիշտ է ներկայացնում սպասարկման գործընթացի փոխկապակցված օղակները,
- գ. ճիշտ է նկարագրում իր և հաճախորդի շփման եզրերը,
- դ. ճիշտ է կազմում ծառայությունների մատուցումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Գործնական առաջադրանք, որի թեման է՝ Ոչ մեծ կազմակերպության համար կազմել ծառայությունների մատուցման որակի հսկողության հայեցակարգ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե փաստաթղթում ընդգրկված են որակի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ հուսալիություն, ծառայության ժամկետի երկարակեցություն, ընկալելի որակ և այլն:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Սպասարկման գործընթացի հիմնական օղակները և դրանց փոխկապակցվածությունը: Ծառայությունների մատուցման որակի ապահովման հիմնական պահանջները և դրանց ապահովումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և պրակտիկայի ժամանակ ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների հիման վրա: Անհրաժեշտ է ունենալ նորմատիվ փաստաթղթեր, գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

